Azg
armenian daily

8 ՓԵՏՐՎԱՐ 1997 ՇԱԲԱԹ # 24 (1278)

Ռուսական բանակը անմխիթար վիճակում

7 ՓԵՏՐՎԱՐ, VOA, BBC: Ռուսաստանի պաշտպանության նախարար Իգոր Ռոդիոնովը հայտարարեց, թե Ռուսաստանի զինված ուժերում իրավիճակն այնքան է վատթարացել, որ այլեւս չի կարելի վստահել միջուկային զենքերի հուսալիությանը: Նախարարի խոսքերով, ֆինանսների պակասը խոչընդոտել է զինծառայողների բարոյականությունը, խախտել մարտական պատրաստականությունը եւ վնաս հասցրել ղեկավարման ու վերահսկման կենտրոններին: Ելույթ ունենալով Ռուսաստանի զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչների առջեւ, Ռոդիոնովն ասաց, թե Ռուսաստանն այլեւս ի վիճակի չէ մրցել ԱՄՆ-ի հետ բարձր անվտանգություն ունեցող զենքի կատարելագործման հարցում: Իսկ պաշտպանության խորհրդի նախագահ Յուրի Բատուրինը հայտնեց, որ վերջին 5 տարում բանակի ֆինանսավորումը կազմել է նվազագույն պահանջի 60 տոկոսը միայն, ինչի հետեւանքով Ռուսաստանի ռազմական պոտենցիալը փաստորեն քայքայվել է: «Եթե մենք արմատական միջոցներ չձեռնարկենք, նավատորմը կմնա առանց նավերի, օդուժն՝ առանց օդանավերի, իսկ արդյունաբերությունն ի վիճակի չի լինի ապահովել բանակի համար անհրաժեշտ զենքի ստեղծումն ու մատակարարումը», հայտարարեց Յուրի Բատուրինը: Նա առաջարկեց անմիջապես սկսել 3 փուլից բաղկացած ռազմական բարենորոգում, որը ներառում է մասնավորապես բանակի կրճատման ու պաշտպանության ճկուն համակարգի ստեղծում: Բարենորոգումների վերջին փուլը կավարտվի 2010 թվականին:

ԱՍՈՒԼԻՍ

Ժիրայր Լիպարիտյան. «Չի կարելի թույլ տալ, որ Ադրբեջանը դառնա համանախագահ նշանակող երկիր»

Հայաստանը անհրաժեշտ չի համարում հրապարակավ արշագանքել ԱՄՆ պետդեպարտամենտի զեկուցագրին



ԵՐԵՎԱՆ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանը անթույլատրելի է համարում փոխել ԵԱՀԿ նախագահի որոշումը՝ Ֆրանսիային Մինսկի խմբի համանախագահ նշանակելու մասին: Ինչպես հայտարարեց ՀՀ նախագահի գլխավոր խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը փետրվարի 7-ին կայացած մամլո ասուլիսում, ստեղծված փակուղուց ելք կարող է հանդիսանալ երրորդ համանախագահի նշանակումը:

Երբ ԵԱՀԿ գործող նախագահ, Շվեյցարիայի արտգործնախարար Ֆլավիո Կոտտին դեկտեմբերի 30-ին որոշում ընդունեց Ղարաբաղի հարցերով զբաղվող Մինսկի խմբի համանախագահ նշանակել Ֆրանսիային, Ադրբեջանը պահանջեց վերանայել այդ որոշումը եւ Ֆրանսիային փոխարինել ԱՄՆ-ով: Երկրորդ համանախագահի պաշտոնը մշտապես զբաղեցնում է Ռուսաստանը:

«Մենք համոզված ենք, որ Ֆրանսիայի՝ նշանակման մասին որոշումն ընդունված է այն բանից հետո, երբ հակամարտության երեք կողմերը չեն առարկել դրա դեմ», ասաց պրն. Լիպարիտյանը:

Հիշեցնելով, որ Հայաստանը ժամանակին որեւէ առարկություն չի ունեցել համանախագահության երեք թեկնածուների՝ ԱՄՆ-ի, Գերմանիայի եւ Ֆրանսիայի դեմ, Ժ. Լիպարիտյանը համոզմունք հայտնեց, որ Ֆրանսիայի նշանակումը չեղյալ հայտարարելը հարցի լուծում չի կարող լինել: «Չի կարելի թույլ տալ, որ Ադրբեջանը, որը հակամարտության կողմերից մեկն է, դառնա համանախագահ նշանակող», ասաց խորհրդականը:

Պրն. Լիպարիտյանը նշեց, որ ԵԱՀԿ ներկայիս նախագահող Դանիայի առաջարկը՝ համանախագահ նշանակել եւ Ֆրանսիային, եւ ԱՄՆ-ին, կարող է հանդիսանալ ելք ստեղծված փակուղուց, ինչպես ժամանակին եղավ մեկ նախագահի փոխարեն երկու համանախագահ նշանակելու որոշումը:

Խորհրդականը վերսին ընդգծեց, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականության դրույթը, որը Լիսաբոնում պաշտպանել է ԵԱՀԿ պետությունների մեծամասնությունը, ընդունելի չէ Հայաստանի համար: «Միջազգային իրավունքը ոչ մի կերպ չի գերադասում տարածքային ամբողջականության սկզբունքը ազգերի ինքնորոշման սկզբունքի համեմատ: Կոսոյի հայտարարությունը (Լիսաբոնի գագաթաժողովում) մեր փաստաթուղթը չէ, եւ մենք չենք կարող այն հիմք ընդունել հետագա բանակցությունների համար», ասաց նա:

Տես # էջ 2

ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վսեվոլոդ Օլեանդրով. Բանակցությունները հաջող ու արգասաբեր էին

Մեր բանակցությունները շատ հաջող ու արգասաբեր էին, այսպես Հայաստանի հետ բանակցություններ վարող Ռուսաստանի Դաշնության պետական պաշտպանության նախարարության ղեկավար, ՌԴ արտգործնախարարության հատուկ հանձնարարությունների գծով դեսպան Վսեվոլոդ Օլեանդրովը գնահատեց իր երեւանյան հանդիպումները: Երեկ նա մեկնեց Երեւանից: Վերջին երկու օրերի ընթացքում ՌԴ պետպաշտպանությունը, որի կազմում էին այդ պետության ԱԳՆ, պաշտպանության, էկոնոմիկայի, ԱՊՀ երկրների համագործակցության նախարարությունների եւ ՌԴ պետական գույքի պետական կոմիտեի ներկայացուցիչները, բանակցություններ վարեց նախարար Գագիկ Շահբազյանի գլխավորած ՀՀ պետական պաշտպանության հետ: Մեկնելուց առաջ մեզ տված հարցազրույցում դեսպան Վ. Օլեանդրովն իր գոհունակությունը հայտնեց Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի, հանրապետության այլ ղեկավարների հետ ունեցած հանդիպումներից: Մենք ունեցանք շատ հետաքրքիր ու շատ բովանդակալից զրույցներ քաղաքական, ռազմական, տնտեսական, հումանիտար հարցերի շուրջ, նշեց դիվանագետը:

Ինչպես հիշեցրեց ՌԴ պետպաշտպանության ղեկավարը, երեւանյան բանակցությունների հիմնական նպատակն էր ճնշության առնել երկու պետությունների միջեւ պայմանագրային իրավական հարաբերությունների վիճակը, ինչպես նաեւ երկկողմ տնտեսական հարաբերությունների արդի փուլը: Այս վերջին ոլորտում մեզանում մեծ առաջադիմություն կա, հատկապես ՀՀ վարչապետ Արմեն Սարգսյանի վերջերս Մոսկվա կատարած հաջող այցից եւ Վիկտոր Չեռնոմիրդինի հետ նրա վարած բանակցություններից հետո: Այստեղ լայն հեռանկարներ են բացվել եւ հարկավոր է միայն լրացուցիչ ջանքեր գործադրել՝ կյանքի կոչելու նախատեսվածը, ասաց Վ. Օլեանդրովը:

Տեղի ունեցած բանակցությունների ժամանակ քննարկվել է նաեւ ՌԴ ու ՀՀ միջեւ բարեկամության, համագործակցության ու փոխօգնության մասին նոր պայմանագրի նախագիծը, որը պիտի փոխարինի գործող պայմանագրին, շարունակեց ՌԴ պետպաշտպանության ղեկավարը: Մենք համաձայնեցրել ենք այդ փաստաթղթի հիմնական դրույթներն ու ուղղությունները, սակայն աշխատանքները դեռ շարունակվում են: Նոր պայմանագրի ստորագրման ժամկետը կախված է դրա մշակումից, առանձին հոդվածների հղկումից ու ճշտումից, նշեց Վ. Օլեանդրովը:

Դիվանագետի կարծիքով, ներկա փուլի ամենահրատապ խնդիրն է Հայաստանում ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագրի վավերացումը, որն այժմ քննարկվում է ՌԴ Պետական դումայում: Աշխատանքի մեջ են երկկողմ փաստաթղթեր հեռուստա եւ ռադիոընկերությունների, իրավաղահ մարմինների համագործակցության վերաբերյալ, ասաց Վ. Օլեանդրովը:

ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ
ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակից
«Ազգի» համար

Հարկային արտոնություններ մամուլին

Ինչպես տեղեկացանք հավաստի աղբյուրներից, ՀՀ կառավարությունը նախատեսում է տպագրվող թերթերի համար որոշակի հարկային արտոնություններ սահմանել: Դրանք կտրամադրվեն ավելացած արժեքի հարկից: Այս որոշումը, կառավարության հաստատումից հետո, ուժի մեջ կմտնի աղրիլի 1-ից: Ա.Ջ.

«Երեւան» տեղեկատվական կենտրոն

«Իրանի դիվանագետները փորձում են Թուրքիայի համբերությունը»

ԱՆԿԱՐԱ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ՆՏ: Թուրք-իրանական հարաբերությունները նոր փուլ են մտել այն բանից հետո, երբ հինգշաբթի օրը Ստամբուլում Իրանի գլխավոր հյուպատոս Մոհամմեդ Ռեզա Ռաշիդին հեռուստատեսային մի հարցազրույցի ժամանակ ասել է. «Իսլամիզմի ալիքը այժմ գրավել է նաեւ Թուրքիան: Դրան դիմադրություն ցույց տվող յուրաքանչյուր ոք վտանգի է ենթարկում իր կյանքը»:

Թուրքիայի «Անատոլու» կիսապաշտոնական լրատվական գործակալությունը այս կարգակցությամբ հայտնել է. «Իրանի դիվանագետները փորձում են Թուրքիայի համբերությունը»:

ՀԱՄԱՌՈՏ

Խավիեր Սոլանան փետրվարի 11-ին կժամանի Վրաստան

ԹԲԻԼԻՍԻ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Խավիեր Սոլանան փետրվարի 11-ին պաշտոնական այցով կժամանի Վրաստան: Այցը տեղի կունենա Անդրկովկասի պետությունների՝ նրա կատարելիք ուղեւորության շրջանակներում: Հանրապետության արտաքին գործերի նախարարության մամլո կենտրոնում ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հայտնել են, որ Խավիեր Սոլանան հանդիպումներ կունենա Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի, խորհրդարանի նախագահ Զուրաբ Ժվանիայի, պաշտպանության նախարար Վարդիկո Նադիբաիձեի, արտաքին հաղորդակցության գերատեսչության ղեկավար Իրակլի Մենաղարիշվիլու հետ:

Ստամբուլում կքննարկվի ազատ առեւտրի գոտի ստեղծելու առաջարկը

7 ՓԵՏՐՎԱՐ, BBC: Ստամբուլում հավաքվել են սեւծովյան տարածաշրջանի 11 երկրներից ժամանած արտգործնախարարներն ու էկոնոմիկայի նախարարները, որպեսզի քննարկեն ազատ առեւտրի գոտի ստեղծելու առաջարկը: Սպասվում է, որ տարածաշրջանում տնտեսական համագործակցության կազմակերպության անդամները կդիտարկեն հատուկ դրամաշնորհ ստեղծելու առաջարկը, որի նպատակը համատեղ ծրագրերի մշակումն է: Այսօր նաեւ տեղի կունենա Թուրքիայի նախաձեռնությամբ 92 թվականին ստեղծված կազմակերպության կենտրոնական պաշտոնական բացումը:

Տաջիկստանում Կարմիր խաչի 2 ներկայացուցիչը ազատ արձակվեցին

7 ՓԵՏՐՎԱՐ, BBC, DW, RFI: Միջազգային Կարմիր խաչի կոմիտեն հայտնեց, որ Տաջիկստանի ադրսամբներն ազատ են արձակել 2 օր առաջ դատապարտված իր 2 աշխատակիցներին: ՄԿԽԿ-ի ներկայացուցչի խոսքերով, դատապարտյալներն ազատ են արձակվել առանց որեւէ բացատրության: Համարվում է, որ ադրսամբների առաջնորդ Բահրամ Սաֆիրովը Աֆղանստանից իր եղբոր եւ կողմնակիցների անվտանգ վերադարձն է պահանջում: Վերջին օրերին զինված միավորումները դատապարտյալներ են վերցրել 16 մարդ, որոնց թվում ՄԱԿ-ի, ՄԿԽԿ-ի ներկայացուցիչներ եւ Ռուսաստանի լրագրողներ: Տաջիկստանի նախագահի գվարդիայի հրամանատար Գուլֆար Միրզոեւը բանակցություններ է վարում դատապարտյալներին ազատ արձակելու մասին: Տաջիկստանի կառավարության հայտարարությամբ, հինգշաբթի օրը Դուշանբեի կենտրոնում առեւանգված ՄԱԿ-ի 4 աշխատակիցներն ազատ կարձակվեն այսօր: Երեկ, սակայն, հայտարարվել էր, որ ռուսաստանցի 4 լրագրողներն են ազատ արձակվելու, ինչը մինչ այժմ դեռ տեղի չի ունեցել:

ՎԱՇԻՆԳՏՈՆ

Վ. Չեռնոմիրդին. «Ռուսաստանը կքննարկի ՆԱՏՕ-ի ընդլայնումը, եթե փոխվի դաշինքի բնույթը»

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ՆՏ: Հինգշաբթի օրը ԱՄՆ-ի փոխնախագահ Ալ Գորն ու Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինը ռուս-ամերիկյան համատեղ հանձնաժողովի ութերորդ նստաշրջանի հետ Չեռնոմիրդինի հանդիպման ժամանակ քննարկվել է ՆԱՏՕ-ի ծավալման խնդիրը, որի ժամանակ վարչապետը կրկնել է Մոսկվայի դիրքորոշումը: Հյուսիս-atլանտյան ռազմական դաշինքի Ռուսաստանի

ժամանակ համաձայնել են [illegible] դրույթյուն դարձնել Ռուսաստանում ԱՄՆ-ի կողմից ներդրումների իրականացման գործը դյուրացնելու խնդրին:

Կոնգրեսի ներկայացուցիչների սահմաններին մոտենալու հարցում: «Մենք դատապարտ ենք քննարկել ՆԱՏՕ-ի ընդլայնման խնդիրը, եթե այդ կազմակերպության բնույթը դաշինքի ռազմական ասպեկտների հարցում փոխվի», ասել է նա:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

ՇՐՋԱՆ

Բաբկեն Սարգսյանը կմեկնի Թբիլիսի

ԹԲԻԼԻՍԻ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ՓՍՍՏ-ՀՊ: Փետրվարի երրորդ տասնօրյակում ծրագրված է ՀՀ Ազգ նախագահ Բաբկեն Սարգսյանի այցը Վրաստան: Այցի ծրագրում նախատեսված են հանդիպումներ Վրաստանի խորհրդարանի խոսնակ Զուրաբ Ժվանիայի եւ այլ պաշտոնատար անձանց հետ: Սպասվում է, որ այցի ընթացքում կքննարկվի միջխորհրդարանական համագործակցության զարգացման հարցը:

Հայաստան բեռներով վագոններ չեն մտնում

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ՓՍՍՏ: Վերջին երկու օրերին հանրապետություն բեռներով ոչ մի վագոն չի ներկրվել: Այս տեղեկությունը «Փաստի» թղթակիցը ստացավ Այրում կայարանի հերթապահությունից: Աշխույժ չէ նաեւ մարդատար գնացքների երթեւեկությունը: Աշխատում է միայն Այրում-Երեւանը, այն էլ երկու օրը մեկ:

ԱՍՈՒԼԻՍ

Ժիրայր Լիպարիտյան. «Չի կարելի թույլ տալ...»

Սկիզբը էջ 1

Ըստ պրն. Լիպարիտյանի, ԵԱՀԿ-ն «փախուստ է տալիս» այս երկու իրավական սկզբունքների հակասության լուծումից: Նրա խոսքերով, Լիսաբոնի գագաթնաժողովի անհաջողությունն ընդունել է. մասնավորապես, Մեծ Բրիտանիայի արտաքին գործոց ու համագործակցության հարցերով պետական նախարար Նիկոլաս Բոնսորը հունվարին Լոնդոնում կայացած միջազգային կոնֆերանսում: Որպես իր խոսքերի աղացույց, պրն. Լիպարիտյանը հիշատակել է նաեւ ԱՄՆ-ի պաշտոնական ներկայացուցչի հունվարի 29-ին արած հայտարարությունը, որում ասվում է, որ Ղարաբաղի հակամարտության լուծումը չի կարող պարտադրվել դրսից, այն պետք է գտնեն հակամարտության կողմերն իրենք:

Անդրադառնալով ԱՄՆ-ի պետդեպարտամենտի՝ մարդու իրավունքների վերաբերյալ զեկուցագրին, Ժիրայր Լիպարիտյանը հայտնեց, որ Հայաստանն անհրաժեշտ չի գտնում հրապարակավ արձագանքել դրան:

Պրն. Լիպարիտյանը նշեց, որ այդ զեկուցագրի Հայաստանին վերաբերող բաժինը պարունակում է «բազմաթիվ սխալներ», եւ այդ մասին հայկական կողմը հայտնել է իր կարծիքը ամերիկյան կողմին:

Խորհրդականը հիշեցրեց, որ այդ ամենամյա զեկուցագրերը կառավարությունը պատրաստում է ԱՄՆ-ի Կոնգրեսի պահանջով, եւ դա բխեցված է որոշակի քաղաքական նպատակներով: Յուրաքանչյուր երկրին նվիրված բաժինը հանգամանալից նկարագրում է վերջին տարում այդ երկրում արձանագրված մարդու իրավունքների խախտումները:

Այն հարցին, թե ինչու է Թուրքիայի կառավարությունը հրապարակավ քննադատել հիշյալ զեկուցագիրը, պրն. Լիպարիտյանը նկատեց, թե հավանաբար, պատճառն այն է, որ Թուրքիան ավելի անբարենպաստ է ներկայացված այնտեղ: «Թուրքիային եւ Ադրբեջանին նվիրված բաժիններն անհամեմատ ավելի ծավալուն են, քան Հայաստանինը: Եթե կարդաք դրանք, առա տպավորություն կստանաք, թե մենք դրախտային երկրում ենք ապրում», ասաց խորհրդականը ժպտալով:

ԹՈՒՐՔ ՍԱՍՈՒԼ

«Կարսը՝ հայկական հին քաղաքակրթության կարեւոր կենտրոններից մեկը»

ԵՐԵՎԱՆ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ-ԻՆՖՈՐՄԱՅԻ ՀԱՅՆ: Լոս Անջելեսում լույս տեսնող «Նոր կյանք» շաբաթաթերթը «Հայերը Կարսում. Վերակառուցման եւ Կառուցման» խորագրով հոդվածում գրում է, որ վերջերս թուրքական ամսաթերթերից մեկում հոդվածագիր Օրու Չողլին մի էջ է նվիրել Կարսին, գրելով, որ այն եղել է հայկական հին քաղաքակրթության կարեւոր կենտրոններից մեկը: Նա հիացմունքով է արտահայտվել Անիի պարիսպների մասին, ասելով, որ դարեր առաջ հայ ճարտարապետների ու վարպետների կառուցած բերդը հոյակապ է: Հիշելով տարբեր ժամանակներում Կարսի կործանումներն ու վերակառուցումները, նա գրում է, թե պատմությունը ամեն կործանումից հետո Կարսը վերակառուցելու պարտականությունը հանձնել է հայերին: Թուրք հեղինակը ընթերցողների ուշադրությունը հրավիրել է Բագրատունիների կողմից կառուցված Կարսի եկեղեցիներից մեկի 12 առաքյալների որմնանկարներին: «Մտել այդ եկեղեցին, որը Օսմանյան շրջանում մզկիթի է վերածվել, դիտեցել 12 առաքյալներին, եւ այդ որմնանկարները լեզու կառնեն պատմելու համար Կարսի փլուզումների եւ վերակառուցումների անվերջանալի արկածախնդրությունը», գրում է հեղինակը:

Հոդվածն ավարտվում է Անի քաղաքի փառաբանությամբ, հիշեցնելով, որ այն Բագրատունիների ձեռակերտն է, որ ամեն անգամ հայերի ձեռքով կրկին վեր է խոյացել փլատակներից: Վերջում հեղինակը հույս է հայտնում, որ Անիի ավերակներից ծագելու են նոր քաղաքակրթություններ անցյալին թողնելով բարբարոսությունը:

Ընդդիմությունը պետք է փոխի ռազմավարությունը, ասում է Սուրեն Զոլյանը

էբերտի հիմնադրամի եւ ժողովրդավարության եւ քաղաքագիտության կենտրոնի համատեղ նախաձեռնությամբ անցկացվող սեմինարների շարքը երեկ վերսկսվեց Սուրեն Զոլյանի «Քաղաքական իրավիճակը Հայաստանում եւ հնարավոր զարգացումները» զեկուցումով: Հիմնական նյութին անցնելուց առաջ պրն Զոլյանն ամփոփեց 1996 թվականի իրենց գործունեությունը՝ 22 սեմինար երեւանում, 9-ը՝ Գյումրիում:

Բանախոսը նշեց, որ նախագահական ընտրությունների ընթացքը եւ դրանց հաջորդած սեպտեմբերյան իրադարձությունները լիովին կանխատեսելի էին, քանզի Հայաստանում 95-ից հաստատվող եւ խորանալ սկսող քաղաքական ճգնաժամի անխուսափելի արդյունքն էին: Վերջինիս պատճառը համարելով կառավարման անարդյունավետությունը, նա զուգահեռ անցկացրեց 96-ի եւ 88-ի քաղաքական իրավիճակների միջեւ. «Քաղաքական դաշտը նույնն էր, փոխվել էին դերակատարները, կարգախոսները, ուժերի դասավորությունը, նույնն էին պիտակները (փողոցային դեմոկրատիա, ամբոխավարություն, «մորուքավորների բազմություն»), որ բացառում են համագործակցության հնարավորությունը: 88-ի արտահամակարգային ընդդիմությունը (ՀՀՇ-ն՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ) այսօր հայտնվել է «նոմենկլատուրային բանդիտների» կարգավիճակում: 96-ը նոմենկլատուրայի ռեւանշն էր 88-ի նկատմամբ՝ այս անգամ վերջինս պահպանեց իշխանությունը»: Պրն Զոլյանը վերլուծեց Լեւոն Տեր-Պետրոսյանի վարքագծի փոփոխությունը նախընտրական շրջանում՝ «միջազգային բնույթի բյուրոկրատից եւ համաշխարհային մասշտաբի ֆունկցիոներից» բարի թագավորի (վատն են նախարարները, իսկ ինքը՝ շփվելով ժողովրդին, ուզում է փոխել իրավիճակը). այնուհետեւ՝ հրաշամանուկի, Քրիստոսի նմանակում (որ լավագույնս փորձարկվեց շամիրամյան հանրահավաքում, որպես համաժողովրդական ուրախության «ինտիֆատա»), եւ մի պահ նախագահի ծրագիրը նույնացավ ընդդիմության ծրագրին: Երբ «իմիջների» միավորման փորձը, սակայն, միայն վնասեց նախագահին, ասաց պրն Զոլյանը: Ընտրություններից հետո, բանախոսի կարծիքով, «ավտորիտարիզմին» փոխարինեց կլանային համակարգը, «կլիենտ-պատրոն» հարաբերությունները, որ «իրադարձությունների զարգացման ամենափափուկ ձեւն էին», Հարավային Իտալիայում գործող մաֆիոզ կառույցների հայաստանյան տարբերակը:

Պրն Զոլյանը, նշելով, որ մոտ ապագայում ժողովրդավարական ուժերի ուժեղացում չի սպասվում, քանզի աննպաստ է տնտեսական իրավիճակը, փակուղուց դուրս գալու հնարավոր տարբերակ նկատեց «սոցիալական կապիտալը» (վստահությունը) տնտեսական կապիտալի վերածելու ճանապարհը. «կառավարությունը պիտի մերժի իր ընտրած սխալ նախարարը եւ վերականգնի վստահությունն իր նկատմամբ»: Մինչդեռ, ըստ Զոլյանի, վարչապետի հայտարարությունները ժողովրդավարության բարենորոգման վերաբերյալ, ցավոք, չեն արտահայտվում բյուջեի ֆինանսավորվող նախագծում: Ստեղծված իրավիճակից դուրս գալու միջոց դիտվեց նաեւ սփյուռքի հետ ավելի գործնական եւ վստահելի կապերի հաստատումը:

Քննարկման մասնակիցները շոշափեցին Արմեն Սարգսյան վարչապետի «Ֆենոմենը»: Ասվեց, որ ընտրություններից հետո Լեւոն Տեր-Պետրոսյան-նախագահը փաստորեն չի գործում եւ վերջինիս գործառույթները կատարում է վարչապետը, իսկ «ո՞վ է կատարում վարչապետի գործառույթները, հայտնի չէ»: Աղասի Արշակյանը տարակուսանք հայտնեց ընդդիմության գործողությունների նկատմամբ. իշխանության բռնազավթման պայմաններում այն կանգնել է ջրբաժանի մի կողմում՝ ակտիվ գործունեությունը սառեցնելու, խաղից դուրս գալու փոխարեն (քանզի ակնհայտ է, որ քաղաքական գործունեությունը Հայաստանում անիմաստ է), եւ դրանով իսկ ջուր է լցնում իշխանությունների ջրաղացին:

Ամփոփելով քննարկումները, պրն Զոլյանն ընդգծեց, որ ընդդիմությունը պետք է փոխի ռազմավարությունը եւ «ալիք բարձրանելու» անհեռանկար գործելակերպը փոխարինի աստիճաններ (կառույցներ) ստեղծելով:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ

Տրաժարած ատենապետին ազատում են պաշտոնից

«Ազգի» հունվարի 8-ի համարում տեղեկացրել էինք, որ ՌԱԿ Մ. Նահանգների արեւմտյան շրջանի վարչության մեծամասնության որոշումով, անարդարորեն աշխատանքից ազատվել էր կուսակցության Կալիֆորնիայի պատգամավորը «Նոր օր»-ի խմբագիր Հակոբ Պողոսյանը, ինչը Լոս Անջելեսի գաղութի կուսակցական եւ համակիր շրջաններում տեղիք էր տվել խոր դժգոհության: Այդ առթիվ, բացի ՌԱԿ Մամլո դիվանի անդամներից, պաշտոնից հրաժարվել էր նաեւ Շրջանային վարչության ատենապետը՝ Ալբերտ Ուզունյանը: Մեր այդ լրատվությունից ավելի քան 20 օր անց, հունվարի 29-ին լույս տեսած «Նոր օր»-ի համարում ՌԱԿ Արեւմտյան Ամերիկայի շրջանային վարչությունը հանդես է եկել մի հաղորդագրությամբ, որտեղ տեղեկացնում է, որ ատենապետ Ալբերտ Ուզունյանը «դեկտեմբեր 28, 1996-ին սկսեալ ատենապետի պաշտօնէն ազատ կացուցուած է», առանց նրա նախօրոք տված հրաժարականի մասին որեւէ ակնարկություն անելու: Փաստորեն, կեղծ ռամկավարների այդ վարչությունում, ատենապետն անգամ հրաժարելու իրավունք չունի. նրան պարզապես ազատում են: «Նոր օր»-ի նույն համարում լույս տեսած մեկ այլ հաղորդագրությունից պարզվում է, որ ատենապետ է դարձել փոխատենապետ Արա Ահարոնյանը, իսկ փոխատենապետ՝ նախապես կուսակցությունից արտաքսված դոկտ. Գրիգոր Գրիգորյանը: «Ժողովրդավարական» նոր քարտերն են արտատպվում կեղծ ռամկավարների շրջանում:

Օտտավայում ՀՀ դեսպանությունը տեղափոխվեց նոր շենք

Նախապես տեղեկացրել էինք արդեն, որ Կանադայի հայկական գաղութի հանգանակած միջոցներով Հայաստանի դեսպանությունը մայրաքաղաք Օտտավայի նախամեծար փողոցներից մեկի՝ Դելավեր ավենյուի վրա տիրացել էր սեփական շենքի: Դեսպանության վերջին հաղորդագրությունը «կանադահայ գաղութին բոլոր կազմակերպություններին ուրախությամբ հայտնում է», որ հունվարի 3-ից սկսած դեսպանությունը արդեն փոխադրվել է նոր շենք, որի հասցեն է 7 Delaware Avenue, Ottawa, Ontario, K2P OZ2: Դեսպանության հեռախոսի համարն է՝ (613) 234-3710, ֆաքսինը՝ (613) 234-3444:

Հայկական բանակի սպաները կունենան նոր ձեւի համազգեստ

ԵՐԵՎԱՆ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մշակվում են հայկական բանակի սպայական եւ ենթասպայական անձնակազմի նոր ձեւի համազգեստներ: Ինչպես հայտնի դարձավ ՀՀ պաշտպանության նախարարության լրատվության եւ մամուլի վարչությունում, դրանց հատկացումը կսկսվի 1998 թ. հունվարի 5-ից:

Լրագրողների կազմակերպությունը՝ ի պաշտպանություն Արգիշտի Կիվիրյանի

ԵՐԵՎԱՆ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Լրագրողներ առանց սահմանների» (Reporters Sans Frontiers) կազմակերպությունը ուղերձ է հղել ՀՀ գլխավոր դատախազին, որում կոչ է արվում սեպտեմբերի 25-ի գործով ամբաստանյալ Արգիշտի Կիվիրյանին համարել լրագրող, այլ ոչ թե անկարգությունների մասնակից: Փարիզում գտնվող այս հեղինակավոր կազմակերպությունը հույս է հայտնել, որ Կիվիրյանի հանդեպ դատավարությունն արդար կլինի:

«Սեպտեմբերի 25/1» գործին դատապաշտպանների մասնակցության հարցը մնաց առկախ

ԵՐԵՎԱՆ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Սեպտեմբերի 25/1» գործի փետրվարի 7-ի դատական նիստին չէին ներկայացել դատապաշտպաններ Անահիտ Եսայանը, Մարինա Հալաբյանը եւ Գայանե Անտոնյանը: Պատճառն այն է, որ այս նիստին զուգահեռ ընթանում էր նաեւ «31»-ի գործով դատական նիստը, իսկ վերոհիշյալ փաստաբանները պաշտպանում են նաեւ «31»-ի գործով ամբաստանյալների շահերը:

Պետական մեղադրող Գեորգի Պիվազյանը միջնորդեց դիմել փաստաբանների կոլեգիայի նախագահությանը նոր դատապաշտպանների թեկնածություններ առաջարկելու խնդրանքով: Իր միջնորդությունը դատախազը հիմնավորեց ՀՀ ՔԴՕ 236-րդ հոդվածով, որը պահանջում է ապահովել դատաքննության անմիջականությունը, բանավորությունը եւ անընդհատությունը:

Դատապաշտպան Մարինա Հալաբյանը «Նոյյան տապան» գործակալության թղթակցի հետ զրույցում նշեց, որ հնարավոր չի լինի «Սեպտեմբերի 25/1» գործով ամեն օր նիստեր անցկացնել, քանի որ Գեորգույն դատարանի շենքում կա ընդամենը 4 դահլիճ: Ըստ նրա, նույն պատճառով էլ «31»-ի եւ «Դրո»-ի գործերը լսվում էին հաջորդաբար:

Ուստի, նրա կարծիքով, այս գործի նիստերը «31»-ի գործով նիստերին զուգահեռաբար անցկացնելու դատավորի մտադրությունը չի բխում օբյեկտիվ անհրաժեշտությունից: Հնարավոր է, որ նման իրավիճակ ստեղծվել է, որպեսզի այս երեք դատապաշտպանները չմասնակցեն «Սեպտեմբերի 25/1» դատավարությանը: Մ. Հալաբյանը չբացառեց նաեւ այլ պատճառների առկայությունը:

Ամբաստանյալներ Ս. Մասոյանը, Ա. Կիվիրյանը եւ Մ.Մեղավորյանը պնդեցին, որպեսզի իրենց շահերը պաշտպանեն վերոհիշյալ դատապաշտպանները: Ս. Մասոյանը հայտարարեց, որ հակառակ դեպքում ինքը անժամկետ հացադուլի կդիմի:

Դատավոր Հ. Ղուկասյանը դատական նիստը հետաձգեց մինչեւ փետրվարի 12-ը, նշելով, որ եթե այդ օրը դատապաշտպանները չներկայանան, ապա հարկ կլինի մտածել նոր դատապաշտպանների թեկնածությունների մասին:

Նիստին ներկա էին Հայաստան ժամանած Եվրախորհրդի մարդու իրավունքների հարցերով պատվիրակության անդամները:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակություն է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրէն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / հեռ. 562863
A STYLE համակարգչային ծառայութիւն / 581841
Apple Macintosh համակարգչային շարուածք «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ԵՐԵՎԱՆ

Եվրախորհրդի պատվիրակությունը՝ հաղթաթղթին հյուր

Երեւանի հաղթաթղթարանից տեղեկացանք, որ փետրվարի 6-ին Երեւանի հաղթաթղթն ընդունել է Եվրախորհրդի պատվիրակության անդամներ Եժի Մակարչիկին (մարդու իրավունքների եվրոպայի դատարանի դատավոր), Դանիել Շվարցին եւ Քրիստիան Դյուրանին (մարդու իրավունքների եվրոպայի հանձնաժողովից): Զրույցի ընթացքում հաղթաթղթն ընդգծել է, որ հետխորհրդային երկրներին բնորոշ խնդիրներին Հայաստանի պարագայում գումարվում են երկարատեւ պատերազմն ու շրջափակումը, որոնք արգելակում են տնտեսության վերականգնումն ու օրենսդրական դաշտի լիարժեք գործունեությունը: Պրն Մակարչիկն իր հերթին ներկայացրել է պատվիրակության առաքելությունը (ուսումնասիրել Հայաստանի դատաիրավական համակարգը եւ համապատասխան զեկուցագիր ներկայացնել եվրոպայի խորհրդարանական ասամբլեային), միաժամանակ նշելով անհատի անվտանգության խնդրի նկատմամբ եվրախորհրդի հետաքրքրությունը, այդ առումով դրական է գնահատել Երեւանի իրավիճակը, ասելով, թե նույնը կցանկանար իր հաղթին՝ Վարշավային:

Քաղաքաթղթը համառոտ ներկայացրել է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններից հետո ստեղծված իրավիճակը՝ նշելով, որ վերջիններիս լիարժեք գործունեության համար կպահանջվի մոտ 2 տարի: Զրույցի ընթացքում շոշափվել են հաղթագլխի եւ թաղաթղթերի լիազորություններին, համայնքների սեփականության բաշխման գործընթացին, հանրահավաքների անցկացման կարգին առնչվող հարցեր:

Գրանցվեց նաեւ «Ակումբ-65» հասարակական կազմակերպությունը

ԵՐԵՎԱՆ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ արդարադատության նախարարության փետրվարի 7-ին կայացած կոլեգիայի նիստը գրանցեց «Հրանտ Շահինյան» բարեգործական հիմնադրամի, դեմոկրատական նախաձեռնությունների կենտրոնի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մարզական ակումբի, «Վոլդ վիժն ինտերնեյշընլ» միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանի մասնաճյուղի, հայ նախկին քաղբանտարկյալների «Ակումբ-65» հասարակական կազմակերպության կանոնադրությունները: Գրանցվեցին նաեւ «Պարտեզ» գրական-գեղարվեստական հանդեսը եւ Կաղանի «Կաղուջուղ» հեռուստաստուդիան:

Ուկրաինայից Հայաստան՝ առանց մախի

Անցյալ տարվա դեկտեմբերին Ուկրաինայի կառավարությունը վավերացրել է Հայաստանի եւ Ուկրաինայի միջեւ 1994 թվականին կնքված ազատ առեւտրի մասին համաձայնագիրը: Դրա հետ կապված սույն թվականի փետրվարի 10-ից Ուկրաինայում արտադրված ապրանքները ՀՀ մախային տարածք ներմուծելու դիմում մախատուրք եւ ակցիզային հարկ չի գանձվելու:

ՀՀ ՄՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Նոր պետը՝ կոչս հաղթականության կողմնակից

Երեկ ՀՀ հարկային տեսչությունում հարկային տեսչության նոր պետը Արտաշես Թումանյանը հրավիրել էր մամուլի ասուլիս:

Ընդամենը մի քանի օր է, ինչ ստանձնել է այս նոր պաշտոնը, բայց արդեն, ինչպես ինքը նշեց, հասցրել է որոշ պաշտոնատար անձանց հրահանգավորել առ այն, թե ինչպես է պատկերացնում համակարգի հետագա աշխատանքը, որոնք են լինելու հիմնական խնդիրները, եւ տարածքային ստորաբաժանումների ղեկավարներն արդեն ստացել են համապատասխան առաջադրանքներ: Պարոն Թումանյանի գնահատմամբ, հանրապետության տնտեսական վիճակը բարդ է, վերջին տարիների սոցիալական լարվածությունը պահպանվում է, բայց ընդհանուր առմամբ առկա են տնտեսության աշխուժացման լուրջ նախադրյալներ, որոնք ստեղծվել են վերջին երկու տարիներին եւ պահպանվում են, ինչը խոսում է, որ հնարավորություն կա զարգացման ծրագիր ունենալու, ոչ թե գոյատեւելու: Նա մեկ անգամ եւս լրագրողներին հիշեցրեց, որ հարկային տեսչությունը կոչված է վերահսկելու հարկահավաքման գործընթացը, նշեց, որ թեպետ 1997 թվականի բյուջեն դեռ քննարկման ընթացքում է, սակայն վերջնական հաստատումից հետո, ավելի պարզ կդառնան հարկային տեսչության հետագա աշխատանքները, հարկային եկամուտները յուրաքանչյուր հարկատեսակի գծով: Հարկային համակարգի հետագա ծրագրերում ընդգրկեց կոչս հարկային քաղաքականությունը եւ ամուր պետական կարգապահությունը: Նշեց, որ անցյալից կուտակված միլիարդավոր պարտքերի նկատմամբ անհրաժեշտ է առանձնահատուկ վերաբերմունք այն առումով, որ այն հարկատուների հանդեպ, ովքեր բարի կամք կցուցաբերեն գլխավոր հարկային պարտքի մարման ուղղությամբ, կլինեն որոշ մեղմացումներ տնտեսական, ֆինանսական պատժամիջոցների շրջանակում: Նա առանձնացրեց, որ հարկային տեսչության տեսադաշտից դուրս մնացած ոլորտներ չպետք է լինեն, այսինքն չպետք է լինեն օբյեկտներ, որոնք տարիներով ստուգման չեն ենթարկվել: Պրն Թումանյանը նշեց, որ տեսչությունը պետք է ստեղծի այնպիսի պլանավորված քաղաքականություն, որ խոշոր եւ միջին հարկատուները լինեն մշտական ուշադրության կենտրոնում եւ վերահսկողության ենթարկվեն: Իսկ միջին հարկատուների համար պետք է ստեղծվի համապատասխան մթնոլորտ: Կարեւորելով հարկային տեսչության մասնագետների վերաբերմունքը, նա ասաց. «Պետք է մի փոքր կոտրել նրանց գիտակցությունը եւ վերաբերմունքը, այսինքն չի կարող լինել աղահոված բարեկեցիկ կյանքով աղքատ պետական ծառայողների մի փոքր խումբ եւ աղքատ հասարակություն»: Նա նշեց, որ անհրաժեշտ է ծառայության պայմանում իրականացնել աշխատավարձի ռեֆորմ, ինչը կնպաստի աշխատանքի արդյունավետությանը: Մյուս մոտեցումները վերաբերում էին հարկային տեսչության ներքին խնդիրներին: Ընդգծեց, որ հարկային ստուգումներ անցկացնելը բավական լուրջ մասնագիտություն է եւ դժբախտաբար, ուսումնական հաստատություններում հարկային տեսուչներ չեն պատրաստում:

ԱՐԱԲՍ ՍԱՖԱՐՅԱՆ

Մարդու իրավունքների ուսուցում դպրոցներում

«Մարդու իրավունքների ուսուցումը Հայաստանի դպրոցներում» այսպիսի ծրագիր է իրականացվում հոլանդական «Աննա Ֆրանկ» գիտական կենտրոնի մասնագետների եւ «Եվրոակումբ-Յունիպեքս» երիտասարդական կազմակերպության մասնակցությամբ: Ըստ կազմակերպության նախագահ Շուշանիկ Պապանյանի, ծրագիրը նախատեսում է մինչեւ 1996-97 ուսումնական տարեվերջ ստեղծել «Մարդու իրավունքների եւ դեմոկրատիայի սկզբունքների» դասագիրք ութերորդ դասարանի աշակերտների, ինչպես նաեւ ձեռնարկ ուսուցիչների համար: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել ՀՀ գիտության եւ կրթության նախարարության հետ համագործակցությամբ: Դասագիրքը եւ ձեռնարկը կտպագրվեն սկզբում փորձնական քանակով 5000 օրինակով եւ կբաժանվեն 15 դպրոցներում: Ծրագրի շրջանակներում տեղի կունենա նաեւ ուսուցիչների վերապատրաստում եւ 1997-98 ուսարվա ընթացքում դասագրքի փորձարկում:

Ծրագիրը նախատեսում է նաեւ 9-10-րդ դասարանների աշակերտների համար արտադասարանային ակումբների ստեղծում: Բանավեճերը կանցկացվեն «Եվրոակումբ-Յունիպեքս» երիտասարդական կազմակերպության կողմից: Ծրագրի ղեկավարը Ֆելիպս Տիրիքսն է, որն ավարտել է Հարվարդի համալսարանի մի քանի բաժանմունքներ, մարդու իրավունքների ուսուցման միջազգային ծրագրերի գլխավոր խորհրդատու է, իրականացրել է նմանատիպ ծրագիր Ալբանիայում, Ռումինիայում, Էստոնիայում, Ուկրաինայում, ղեկավարել է Լիտվայի եւ Բուլղարիայի ազգային ծրագրերը:

Ծրագիրը նախատեսված է 2 տարով եւ համաձայն Հոլանդիայի կառավարության կողմից կնքված համաձայնագրի, տեւելու է 1996 թ. սեպտեմբերի 15-ից մինչեւ 1998 թ. սեպտեմբերի 14-ը: Դասընթացներին մասնակցած ուսուցիչներին նախատեսվում է կրթաթոշակ, ինչպես նաեւ մեկշաբաթյա դասընթացներ հանրապետության դասագրքի փորձարկման փուլում, ուսուցիչների վարձատրում:

Հայոթեսանդարտը ծավալաչափի դույլերից տեղյակ չէ

ԵՐԵՎԱՆ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Լուրեր են պտտվում այն մասին, որ Երեւան քաղաքի եւ հանրապետության այլ բնակավայրերի բենզալցման որոշ կայաններում եւ կետերում վառելիքի վաճառքն իրականացվում է Հայոթեսանդարտի կողմից արտադրված ծավալաչափ դույլերով:

Ինչպես Արմենպրեսի թղթակիցը տեղեկացավ Հայոթեսանդարտից, վարչությունը ծավալաչափ դույլերի արտադրությամբ չի զբաղվում: Ավելին, հանրապետության որեւէ ձեռնարկություն կամ ձեռներեց նման արտադրություն կազմակերպելու հայտով չի դիմել իրենց: Հետեւաբար, Հայոթեսանդարտը չի կարող երաշխավորել անհայտ արտադրության, չստուգաչափված դույլերով վաճառվող վառելիքի եւ վաճառողի կողմից հայտարարվող ծավալների համապատասխանությունը:

Մյուս կողմից, Հայոթեսանդարտը երաշխավորում է վառելիքալցման այն հաշվիչների աշխատանքի ճշտությունը, որոնք, ըստ վառելիքալցման կայանների հայտերի, ստուգաչափվել եւ կապարակնքվել են վարչության չափագիտության ծառայության կողմից:

Կ. ՊՈԼԻՍ

ՀՀ արտգործնախարարն այցելեց պատրիարքարան

ՍՏԱՄԲՈՒԼ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Արմենպրեսի սեփական թղթակիցը հաղորդում է. Սեւծովյան տնտեսական համագործակցության արտգործնախարարների հանդիպմանը մասնակցելու համար փետրվարի 6-ի երեկոյան Ստամբուլ ժամանեց ՀՀ արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանը: Օդանավակայանում նրան դիմավորեցին Թուրքիայի արտգործնախարարության ներկայացուցիչը, մինչ այդ Ստամբուլում գտնվող հայկական պատվիրակությունը:

Նույն օրը Ա. Արզումանյանը քաղաքավարական այց կատարեց Պոլսի պատրիարքարան եւ Աթոռանիստ Մայր եկեղեցի: Նրան, հայ հոգեւոր բարձրաստիճան այրերի, պոլսահայ համայնքի ներկայացուցիչների մասնակցությամբ, ընդունեց Մեսրոպ արք. Մութաֆյանը: Նախարարը նրանց ծանոթացրեց Հայաստանի ներքին եւ արտաքին քաղաքական իրավիճակին:

Ընդունելության, այնուհետեւ ուշ երեկոյան ելույթում տրված ճաշկերույթի ժամանակ հյուրընկալներին հետաքրքրում էին Թուրքիայի եւ Հայաստանի բարիդրացիական հարաբերությունների մակարդակը, փոխադարձ վստահության հնարավորությունները: Մասնավորապես այն հարցը, թե ՀՀ արտգործնախարարն ինչ ակնկալիքներ ունի Թանսու Չիլլերի հետ փետրվարի 7-ին կայանալիք հանդիպումից:

Այս կապակցությամբ Ա. Արզումանյանը նկատեց, որ քննարկվելիք բազմաթիվ հարցեր կան, քանզի Թուրքիան եւ Հայաստանը հարեւան երկրներ են: Նա առանձնապես նշեց երկկողմ առեւտրական հարաբերությունների հաստատմանը վերաբերող խնդիրները, նաեւ դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի ներկա փուլը, նկատի ունենալով, որ Թուրքիան անդամակցում է ԵԱՀԿ Մինսկի խմբին: Հնարավոր է նաեւ զբոսաշրջության եւ մշակութային համագործակցության հարցերի արծարծում: ՀՀ նախարարը նշեց նաեւ, որ Հայաստանը կողմնակից է մասնագետների մակարդակով աջակցել Անիի բարենորոգման աշխատանքներին:

Փետրվարի 7-ին Ա. Արզումանյանը, Սեւծովյան տնտեսական համագործակցության արտգործնախարարների խորհրդակցություններին մասնակցելուց բացի, կհանդիպի Թանսու Չիլլերի հետ, ենթադրվում են նաեւ երկկողմ, ինչպես նաեւ մամուլի ներկայացուցիչների հետ հանդիպումներ:

ԼՂՀ

Գործազուրկների թիվն աճում է

ԼՂՀ աշխատանքի ու զբաղվածության կենտրոնի տվյալներով, այս տարվա հունվարի 1-ի դրությամբ Ղարաբաղում արձանագրվել է 4318 գործազուրկ: 96-ի նույն ժամանակահատվածում այդ ցուցանիշը կազմել էր 3103: Կենտրոնի փորձագետները նշեցին, որ գործազուրկների թվի աճը կապված է հիմնարկ-ձեռնարկություններում եւ այլ ոլորտներում վերջերս կատարված զանգվածային կրճատումների հետ: Մտահոգիչ է այն հանգամանքը, որ գործազուրկների շրջանում զգալի թիվ են կազմում երիտասարդ տղամարդիկ: Փորձագետները մտավախություն են հայտնում, որ գործազրկության աճը կարող է հանգեցնել աշխատունակ բնակչության անցանկալի արտագաղթի: Շրջափակման, հումքի մատակարարման բացակայության եւ որոշ հետեւանք գրեթե կայուն ... գործարանում, փորձագետի կարծիքով, ակտիվ դեր պետք է խաղա ... հայաստանյան ... ձեռներեցները ԼՂՀ տնտեսության ... ներդրումներ կատարելու եւ ... նոր աշխատավայրեր բացելու նպատակով:

ՎԱՀԵՐԻՐ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԱԲՈՎՅԱՆ

Հին ու փորձված սցենարը շարունակվում է

Հունվար ամսվանից մինչեւ օրս Աբովյան քաղաքում էլեկտրաէներգիայի անջատումներ են լինում (հիմնականում երեկոյան ժամերին): Շատ լեզուներն ասում են, որ դա արվում է նավթ վաճառելու համար: Այսինքն, ինչ-որ մեկը համաձայնության է եկել էլցանցի ղեկավարների հետ, որպեսզի հոսանքը անջատվի, եւ մարդիկ ստիպված նավթ գնեն: Մեկ այլ բան էլ են ասում, որ հացի փռերի միջեւ գոյություն ունեցող վայրենի մրցակցությունն է էլեկտրաէներգիայի անջատման պատճառը: Փռերի տերերը միմյանց վնասելու նպատակով դարձյալ համաձայնության գալով էլցանցի ղեկավարների հետ, հոսանքն անջատել են տալիս: Երկու դեպքում էլ տուժում է ժողովուրդը:

Մի բան պարզ է: Անջատումների պատճառը հոսանքի դեֆիցիտը չէ: Հակառակ դեպքում էներգիայի դեֆիցիտը ինչո՞ւ բոլորին չի վերաբերում: Թաղամասեր կան, որոնց էներգիան չի անջատվում: Հին եւ փորձված սցենարը շարունակվում է:

Ա. Ա.

Ամենալավ մարդը, ում ճանաչում եմ՝ բժիշկ է

«Արմենիա բժշկական բուժ. կենտրոն», այսպես է կոչվում Գրիգոր Գրիգորյանի գլխավորած բոլորիս քաջածանոթ հանրապետական հիվանդանոցը: Այս կենտրոնից ես կփորձեմ ներկայացնել ընդհանուր վիրաբուժության բաժանմունքը: Այն պատկանում է եզակիների թվին այն առումով, որ վիրահատությունները կատարվում են անվնաս, համենայն դեպս, նույնն է պնդում բաժնի վարիչ Հակոբ Թամամյանը: Մեր օրերում ֆինանսապես անապահովների բանակը բավականին ստվար է եւ միանշանակ կարելի է ասել, որ մարդիկ դիմում են բժշկի այն ժամանակ, երբ դանակը հասնում է ոսկորին: Բացատրությունը մեկն է՝ փող չունենալը, վախը, որ իրենց կզգան «անտեր» հիվանդի կարգավիճակում: Հիվանդի համար գերագույն հոգեկան հանգստություն է, երբ վստահ է, որ ապահով ձեռքերում է, որ ինքը գերծ է ամենամի ճնշումից, մանր-մունր հաշիվներից: Երեւի թե հենց սրանով է պայմանավորված հիվանդների մեծ հոսքի առկայությունը կլինիկայում: Սա մեծ հույս է, նաեւ հավաս, որ կհանդիպեն անշահախնդիր օգնության, որ վշտի ու հուսահատության պահին հարազատ քրոջ պես նրանց կսփոփի ավագ բուժքույր Լենա Բալոյանը: Կարիք կա՞ հիշեցնելու, որ գործ ես ունենում բանիմաց ու պրոֆեսիոնալ վիրաբույժների հետ. պրոֆեսոր Աղոյան, Վարդան Հակոբյան (ինձ համար ամենալավ բժշկի ու մարդու իդեալ) եւ այլոք: Փորձառուների կողքին գործում եւ սովորում են երիտասարդները՝ Դավիթ Սարգսյանը, Լիանա Դանիելյանը:

Ինձ թվում է, այստեղ բոլոր հաջողությունների գրավականը համերաշխ կոլեկտիվն է, որտեղ ամեն ոք գիտի իր ասելիքն ու անելիքը:

ԱԼԲԵՐՏ ՊՈՂՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Ազգային

Ղարաբաղը՝ ճարտար դիվանագիտության եւ նավթային կրքերի հորձանուտում

Պետականության կայացման խրթին ոլորաններում հայրենի իշխանությունների (եւ մեր) առանձին հոդարտության առակաև անցած 5-6 տարիներին արտաքին քաղաքականության ոլորտում ձեռք բերած ցնցող հաջողություններն են. Հայաստանն, ինչպես նախկին ԽՍՀՄ բոլոր, նույնիսկ «ամենաանկախագույց» հանրապետությունները, ճանաչված է միջազգային հանրության կողմից. ՄԱԿ-ի անդամ է. մասնակցում է միջազգային կառույցներին, այդ թվում Եվրախորհրդին «սերտաճելու» գործընթացներին: Տարիներ շարունակ մեզ հավատացնում էին, թե հայ դիվանագիտական միտքը ուկերչական ճշտությամբ փուլ առ փուլ հոկում է ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման բանալին՝ միայն «աննշան» շեղումներ արձանագրելով ապխանված ուղուց: Մեր դիվանագետներն, օրինակ, միջազգային հանրությանը շարունակ «ներշնչում» էին, թե Հայաստանը հակամարտող կողմ չէ. մինչ «ներքին խոհանոցում», հատկապես ընդդիմության «քաղաքական խաղերի» ախորժակը սանձելու համար հարազատ ժողովրդին «դեմ էին տալիս» ղարաբաղյան հաղթաթուղթը. «պատերազմում հաղթած ժողովուրդ ենք», «հաղթանակած բանակի գեներալին չեն դատում» եւ այլն: Նախընտրական թոհուբոհում հենց այդ խաղաթղթերն էլ ուժային նախարարի մտավորականի, քաղաքագետի, քաղաքական գործչի եւ պարզապես քաղաքացու շուրթերով հրամցվեց հեռուստադիտողին, թերթերի ընթերցողին: Այդ մասին անգգուշության հասնող անկեղծությամբ արտահայտվեց նախագահի հավատարիմ զինակից եւ բարեկամ, ՆԳ նախկին նախարար Վանո Սիրադեղյանը: Հանրապետության հրապարակում անցկացված շամիրամյան արժանահիշատակ հանդիպումներում. «Ձեռքը դրեք սրտին եւ ասեք, երազո՞ւմ էիք, թե 50 տարի հարյուր տարի հետո Ղարաբաղը կմիանա Հայաստանին: Հիմա միացած է», «Գնացեք եւ գոնե մի անգամ շնորհակալություն հայտնեք նախագահին Ղարաբաղի համար»:

Նախագահական ընտրություններից հետո, սակայն, վրա հասան որոշ դիվանագիտական հաղթանակներ ներկայացվող պարտությունների պտուղները ժողովրդին մատուցելու. ներքին ճակատում անսխալ գործող «դիվանագիտությունը» ողջ թափով գործի դնելու ժամանակները: Մանավանդ, առկա է նահանջն արդարացնելու պատճառը. ընտրություններին հաջորդած իրադարձությունները խաբարել են Հայաստանի «իմիջը». հայկական կողմի դիրքերը միջազգային ասպարեզում թուլացել են. ճնշումը Հայաստանի վրա ուժեղացել. ԼՂ հիմնախնդրի կարգավորման երկնակամարում քանձրանում են մութ ամպեր: Սակայն ո՞ւմ. եթե ոչ մեր «ժողովրդավար իշխանությունների» խնդիրն էր խուսափել իրադարձությունների անցանկալի ընթացքից եւ աղահովել «ժողովրդավարության կղզյակի» հավակնություն ունեցող երկրին վայել ընտրություններ՝ չենթարկվելով բանակցություններին տկարացած ներկայանալու վտանգին:

Լիսաբոն մեկնելուց առաջ ՀՀ նախագահը, հերթական անգամ կշտամբելով ընդդիմությանը, խոստացավ, որ Լիսաբոնում որեւէ անակնկալ չի լինի, եւ Հայաստանը միակողմանի զիջումների չի գնա: Պատասխանատու քաղաքական քարոզչությունը լիսաբոնյան «արդյունքը» գնահատեց որպես արդյունքի բացակայություն, իսկ ԵԱՀԿ նախագահի հայտարարությունը, որ փաստորեն բանակցային գործընթացից դուրս ԼՂՀ կարգավիճակը կանխորոշելու փորձ էր, ներկայացվեց գրեթե որպես զգացական արտահայտություն: Մինչդեռ, այլ կարծիքի է ՀՀ առաջին փոխարտգործնախարար Վարդան Օսկանյանը, որը լրջագույն ֆիզիք է արտաքին հարաբերությունների. հատկապես ղարաբաղյան կարգավորման հորիզոնում: Իր վերջին հրապարակային ելույթներում, մասնավորապես, դեկտեմբերի 17-ին Լոս Անջելեսում AIM ամսագրի կազմակերպած մամուլի ասուլիսում («Ազգ», 21 դեկտեմբերի), որն Օսկանյանը խոր անհանգստություն է հայտնում հետլիսաբոնյան բանակցային մթնոլորտի վերաբերյալ, փոխված է կացությունը, փոխված են խաղի կանոնները եւ մեր առջեւ բարձրացող մարտահրավերները չենք կարող այլեւս դիմագրավել ցարդ որդեգրված եղանակներով: Լիսաբոնի գագաթաժողովի մասնակից երկրները «հավասարապես Հայաստանին ըսին այն, ինչ որ 4 տարիե ի վեր անուղղակիորեն կ՚ըսեին անհատաբես», թե «ԼՂ-ը պետք է մնա Ադրբեջանի կազմին մեջ եւ մենք կրնանք ունենալ ինքնավարության բարձր աստիճան մը»: «Համախմբում մը ստեղծված էր Հայաստանի դեմ», «հակամարտությունը թեւակոխեց նոր հանգրվան մը ստացավ նոր որակ Լիզբոնեն ետք»: «Այսօր Ադրբեջանի ձեռքին կան երեք շաբաթ կարեւոր խաղաթղթեր նավթը, խարիսխները հարցը եւ սահմանները վերահսկողությունը: Հայաստանը դժբախտաբար այդ 3 խաղաթղթերը սղաստած է: Նախ նավթ չունի, ռազմական խարիսխները հանձնած ենք Ռուսաստանին, իսկ սահմանները կը վերահսկվին Ռուսաստանի կողմե»: Որո՞նք են, որեմն, մեր նրբին դիվանագիտության ձեռքբերումները. Հայաստանը բացարձակ դիվանագիտական շրջափակման մեջ է (ի տարբերություն սումգայիթներ, բաքուներ, ռազմական հեղաշրջումներ տեսած եւ, չնայած դրան, երբեւէ միջազգային ճնշումների չենթարկվող Ադրբեջանի) եւ, անմնացորդ «տվելով» բարեկամ Ռուսաստանին, ի չիք է դարձել իր խաղաթղթերը: Այստեղից հայ դիվանագիտության «մախսիմում խնդիրը» պահպանել «ցարդ իրագործվածը», հայության բոլոր ուժերը կենտրոնացնել միջազգային հանրության կողմից հնարավոր պաշտպանիչներին դիմակայելու (ներառյալ Սփյուռքի հնարավորությունները, որ անտեսվում էին մինչեւ լիսաբոնյան «հանգուցալուծումը»):

Մեր դիվանագիտությունն ինչո՞ւ է համեստորեն լռում «Ադրբեջանի «տարածքային ամբողջականության» իրական արժեքի մասին: Ո՞ր տարածքի ամբողջականության, ո՞ր սահմանների անձեռնմխելիության մասին է ճչում Ադրբեջանը: «Ժողովրդավար», «ամբողջատիրության երդվյալ հակառակորդ» Արեւմուտքը ո՞ր համաձայնագրի, ո՞ր հռչակագրի հիման վրա է անվերապահորեն զինվորագրվել Սալինի գծած սահմանների անձեռնմխելիության պահպանման գերխնդրին: Մոլեռանդորեն պաշտպանելով տարածքային ամբողջականության սկզբունքը, միջազգային հանրությունն ինչո՞ւ հիացմունքով ընդունեց երկրորդ գերտերության ԽՍՀՄ տարածքային ամբողջականության խախտումների շահանդեսը, միջազգային շահագրգիռ կազմակերպությունների գերակշռությունը որտե՞ղ էր, երբ մասնատվում էր Հարավսլավիան: Եվ ի՞նչ բարոյական իրավունքով է 20-րդ դարի ամենաամոթալի էջերից մեկին՝ 1915-ին հայերի ցեղասպանության ականատես միջազգային հանրությունը անվանգության անորոշ երաշխիքներ խոստանում Ղարաբաղին: Ո՞ւմ է ձեռնտու «հոլարս» լռությունը, որով չգիտես ինչու պետականորեն պարարտում ենք մեր ժողովրդի ողբերգությունները. 1915 թվական, Շուշի, Բաքու, Սումգայիթ, նորից Բաքու: Լռություն, որ թույլ է տալիս ցեղասպանություն իրագործած երկրին դատավորի դեր ստանձնել նույն ժողովրդի համեմատաբար փոքր հատվածի նկատմամբ՝ ազգային-ազատագրական պատերազմը «հարեւան երկրի տարածքային ամբողջականության նկատմամբ ոտնձգության», արցախյան հերոսամարտը «Ադրբեջանի նկատմամբ ագրեսիայի» ենթադրելու ճանապարհով: Մինչդեռ ադրբեջանական դիվանագիտությունը (այդ թվում ժողովրդական, որի մասին մենք առհասարակ մոռացել ենք) բոլոր ամբիոններից, բոլոր մակարդակներով, շարունակում է ի լուր աշխարհի գոռալ հայկական ագրեսիայի, բռնագրավված տարածքների, ադրբեջանցի փախստականների բանակի մասին, մեր իմաստուն դիվանագետներին վիրավորելով հավերժ պաշտպանվող կարգավիճակը:

Այժմ էլ, մեր իշխանությունները, հերթական անգամ ընտրելով նվազագույն դիմադրության ուղին, հայրենի եւ օտար դիվանագետների միջոցով փորձում են համոզել սեփական ժողովրդին միջազգային հանրության հեղինակավոր կարծիքն անտեսելու դեպքում մեզ սպառնացող պատժամիջոցների զինանոցը եւ հնարավոր հաջորդականությունը նկարագրելով, չմոռանալով ակնարկել «աստեղային պահն օգտագործելու» հնարավորությունը՝ «հետո ուշ կլինի» սպառնալից ենթատեքստով: Մեր դիվանագիտությունն արդյոք որքանո՞վ է օգտագործել հայկական «հզոր» լոբբին, որի գովազդով նախանձելի հետեւողականությամբ զբաղվում է ադրբեջանական անընդուն քարոզչությունը, եւ ինչո՞ւ է դայլնվել բացասական հնարավորությունների գոտում միշտ պատրաստ «փոխզիջումների», եւ ինչո՞ւ «փոխզիջում» բառն առավելաբար օգտագործվում է Հայաստանի համար (ադրբեջանցիները փոխզիջման որեւէ միտում չեն ցուցաբերում, այլ, երկու ոտքը մի մաշիկի մեջ դրած, «տարածքային ամբողջականություն» են կրկնում շարունակ): Համաձայնեք, սա իսկապես դիվանագիտություն է, ռազմաճակատում պարտվելով, փոխզիջումներ պարտադրել հաղթողին՝ միջազգային հանրության գոհունակ հայացքի տակ, որ մշուշվել է նավթային ակնկալիքներից: «Սաղոլ», ինչպես կասեին նավթային մագնատների ապագա հայրենիքում, որ, ի դեպ, շատ ավելի շահագրգռված պետք է լինի խաղաղության հաստատմամբ եւ, որեմն, փոխզիջումների պատրաստ, քանզի առանց դարաբաղյան կնճռի լուծման ադրբեջանական «սեւ ոսկին» լեգենդից այն կողմ չի անցնում:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Հ.Գ. Հանուն արդարության պիտի ասել, որ Լիսաբոնից հետո մեր դիվանագետներն, այնուամենայնիվ, սկսել են «ուշքի գալ» եւ «մագիլներ ցույց տալու» փորձեր են անում:

ԵՐԲԱՂԱՔԱԿԱՆ

Պետություն եւ իշխանություն

Հետսեպտեմբերյան իրադարձությունները, ըստ իս, բացահայտեցին բավական տխուր մի իրողություն. պետության իշխանական ոլորտներում առկա է երկու թեւ՝ ընդդիմության, ասել է՝ նրա հետեւից գնացող զանգվածների նկատմամբ այսպես կոչված «կոշտ գիծ» որդեգրածների, եւ հակառակը՝ ընդդիմության փաստարկների մեջ առնվազն խորամուխ լինելու եւ անհրաժեշտ հետեւություններ անելու հակվածների թեւը: Անցած 4-5 ամիսներին ընդդիմադիրների հետ «կոպիտ երկխոսություն» սկսած իշխանական թեւի դիրքորոշումներում առայժմ էական փոփոխություններ չեն նկատվում: Նկատի ունեմ ՀՀ նախագահին, ԱԺ նախագահին եւ նրանց մերձավոր զինակիցների ու համախոհների (կամ այդպես ձեւացողների) բավական սպվար խումբը: «Մեղմ գծի» կողմնակիցները, ի դեմս Էդուարդ Եգորյանի եւ Դավիթ Շահնազարյանի, գուցե նաեւ՝ Արա Սահակյանի, այս ընթացքում, համենայն դեպս, ձեռք չեն բերել նոր համակիրներ եւ քանի որ օժտված չեն այնպիսի փաստացի իշխանությամբ, որ կարողանան ի պատասխանություն իրենց տեսակետի գործի դնել նաեւ այլ լծակներ, բացի հասարակական կարծիքը, ապա ասելիանաբար լռում են՝ ի տես նաեւ այն իրողության, որ այս վերջինը Հայաստանի երրորդ հանրապետության ծննդից ի վեր երբեք որեւէ էական, էլ չասենք վճռական նշանակություն չի ունեցել «ուժային» դիրքերից հանդես եկողների համար:

Այս ամբողջ ընթացքում փորձել եմ գտնել այն հարցի պատասխանը, թե ինչո՞ւ իրական իշխանությամբ օժտվածների թեւը այդքան հիվանդագին արձագանքեց սեպտեմբերյան իրադարձություններին եւ ինչո՞ւ անցած բավական տեւական ժամանակաշրջանը չկարողացավ մեղմել այդ շատ բանով հուզական արձագանքը:

Չխորանալով զանազան ոչ էական հանգամանքների մեջ (վիրավորված ինքնասիրություն, անձնական անբարյացակամություն, իշխանությունը կորցնելու վախ, այս պարագայում մինչեւ այժմ արածի ու չարածի համար հաշիվ տալու հեռանկարի հանդեպ բնական տհաճություն եւ այլն, եւ այլն), որոնցից յուրաքանչյուրն այս կամ այն չափով, անշուշտ, կարող էր եւ դեռ կարող է կանխորոշել պետական այս կամ այն պաշտոնատար անձի վարքագիծը, կուզենայի ուշադրություն հրավիրել եւս մի, իմ կարծիքով՝ շատ ավելի էական հանգամանքի վրա: Այն է՝ Հայաստանի Հանրապետության իշխանական էլիտային պատկանող գործիչների գիտակցության մեջ դեռեւս չափազանց խորն է պետության եւ իշխանությունների նույնացման խորհրդային սինդրոմը, ինչը ավելի վաղ հրապարակած իմ հոդվածաշարերից մեկում բնութագրել եմ իբրեւ «ամբողջատիրական հիվանդության» դրսեւորում:

Հիշեցնեմ, որ ոչ վաղ անցյալում խորհրդային օրենսդրության մեջ ամրագրված էր «հակախորհրդային ագիտացիա եւ պրոպագանդա» հասկացությունը, իբրեւ ծանր քրեական հանցագործություն, էլ չխոսելով «պետական կարգը փոխելու», այդ կարգը «վարկաբեկելու» եւ համանման հասկացությունների մասին, որոնք արդեն դիտվում էին որպես մահապատժի արժանի ոճիրներ: Ինչո՞ւ էր այդպես:

Որովհետեւ ապրիորի համարվում էր, թե խորհրդային հասարակական կարգը աշխարհում լավագույնն է, համապատասխանում է հասարակության բոլոր անդամների բացարձակ մեծամասնության շահերին:

Ինչ-ինչ, բազմիցս ասել եմ, թե բոլորս դուրս ենք եկել միեւնույն բոլշեւիկյան շինելից, այդ թվում եւ՝ մեր այսօրվա պետական այրերը, եւ իմ տպավորությամբ՝ նրանցից շատերի աչքում այսօր էլ ներկա հասարակական կարգի ճնշադատության, նրա արատների բացահայտման, դրանց վերացման, էլ չխոսելով այդ կարգի փոփոխության ամեն մի փորձ ընկալվում է իբրեւ «պետական դավաճանություն», «պետական հեղաշրջում», այսինքն, մահացու մեղք: Վկան՝ նորօրյա քաղաքական դատավարությունները, որոնցում չգիտես ինչու կոնկրետ քրեական հանցանքներին տրված է հենց այդպիսի քաղաքական երանգավորում:

Ասածում է հայտնի՝ որքանով լուրջ, որքանով անլուրջ՝ հավակվել են մի քանի հոգի, իրար հետ մտքեր փոխանակել ներկա իշխանությունները այս կամ այն կերպ փոխելու անհրաժեշտության մասին, կատարել կամ չեն կատարել կոնկրետ գործողություններ այդ նպատակին հասնելու համար, եւ եթե նույնիսկ ունեցել են ամենաչարամիտ դիտավորություններ, ապա այդ դիտավորությունները իրականացնելու որեւէ փորձ արդեն իսկ կանխվել է, բայց ահա «հայրենիքի դավաճանության» սարսռազդու մեղադրանքը կախվել է յուրաքանչյուրի գլխին:

Գրել եմ եւ էլի եմ գրելու՝ իշխանությունների հանդեպ նույնիսկ ամենաքննադատական վերաբերմունքը, ամենաբացահայտ ատելությունը, նույնիսկ նրանց դեմ ձեռնարկված ամենաանթույլատրելի, ամենահակասահմանադրական գործողությունները չեն կարող գնահատվել իբրեւ «հայրենիքի դավաճանություն»: Դրանց այլ որակում պիտի տալ: Քանզի որեւէ իշխանություն, որեւէ երկրում, որեւէ ժամանակ չի ունեցել եւ երբեւէ չի ունենալու այնպիսի թանկագին, համաարժեք բարոյական Արժեք, ինչպիսին Հայրենիքն է: Նույն կերպ՝ իշխանությունների փոփոխությանն ուղղված որեւէ երազանք, տենչ, ցանկություն, առավել եւս՝ բացահայտված, կանխված, չիրականացված, չսկսված դավադրական մտահղացում չի կարող գնահատվել իբրեւ «պետական հեղաշրջում»: Որովհետեւ ո՛չ մի իշխանություն երբեւէ չի եղել եւ չի լինի այս անգամ արդեն պետությանը հավասար բարոյական Արժեք:

Ինչպես որ սպանություն ծրագրավորելը, ծախսված մահափորձը եւ իրականացված մարդասպանությունը ամենեւին միեւնույն բանը չեն եւ քրեական օրենսգրքում ձեւակերպված են իբրեւ տարբեր հանցանքներ՝ տարբեր ծանրության պատժաչափերով, ճիշտ այդպես էլ իշխանությունների հանդեպ ծրագրավորված, նախապատրաստված, բացահայտված, կանխված կամ ձախողված՝ օրենքով անթույլատրելի գործողությունները պետք է ունենան իրենց տարբեր ձեւակերպումներն ու տարբեր պատժաչափերը, սակայն ամեն դեպքում՝ ոչ իբրեւ «հայրենիքի դավաճանություն» կամ «պետական հեղաշրջում»:

Մարդուն չի կարելի պարտադրել, որ նա սիրի կամ չսիրի սեփական իշխանություններին: Մարդուն չի կարելի արգելել, որ նա սիրի կամ ատի նրանց: Դա յուրաքանչյուրի խղճի գործն է: Իսկ ահա սեփական Հայրենիքը սիրելը, այդ Հայրենիքին նվիրաբերվելը, հանուն նրա ապրելն ու գործելը յուրաքանչյուր բանական մարդու բնական ինքնադրսեւորման պարտադիր պայմանն է, մարդուն մարդ դարձնող ու մարդ պահող բարձրագույն բարոյական Արժեքը:

Ամենեւին մտադրություն չունեմ որեւէ մեկին որեւէ բան սովորեցնել: Ես, պարզապես, այսպես եմ մտածում եւ եթե նույնիսկ սխալվում եմ, ապա իբրեւ ազատ երկրի ազատ քաղաքացի օգտվում եմ ինձ հուզող մտքերը հրապարակավ արտահայտելու իրավունքից: Ընդսմին հոգուս խորքում փայփայում եմ երկու հույս. առաջիկայում, երբ վերջնականապես մշակվի եւ ընդունվի մեր հանրապետության քրեական նոր օրենսգիրքը, միգուցե այս մտքերը ինչ-որ չափով օգտակար լինեն օրենքի համապատասխան հոդվածները մշակողներին, եւ երկրորդ՝ եթե սեպտեմբերյան եւ այլ հայտնի իրադարձություններին մեր պետական այրերը մի պահ փորձեն նայել իմ «պատուհանից», ապա կարծում եմ, այդքան սուր չեն վերաբերվի կատարվածին:

Համոզված եմ, ընդդիմության նկատմամբ որդեգրած «կոշտ կեցվածքը» մեզ տարել եւ տանելու է փակուղի: Որեւէ բարոյական վեճում «բռունցքի ուժը» չի եղել եւ չի կարող փաստարկ համարվել: Իսկ մեր ընդդիմության եւ իշխանությունների վեճը, անշուշտ, բարոյական է: Որքան շուտ հարթվի այդ վեճը, այնքան լավ է լինելու բոլորիս համար: Սակայն դրա համար, կարծում եմ, անհրաժեշտ է եւս մեկ անգամ ինքն իրեն համոզել եւ ոչ թե խոսքով, այլ հոգո՛վ ընդունել մի պարզ բան՝ պետությունը եւ իշխանությունը... նույն բանը չեն: Երբե՛ք: Իշխանությունը անցողիկ, չնչին մի բան է պետության, իբրեւ ազգային հավաքականության կազմակերպման բարձրագույն ձեւի, համեմատությամբ: Հանուն առաջինի երկրորդի կայունությունը վտանգելը ծանր մեղք է՝ ում կողմից էլ որ գործադրվի: Ճիշտ նույն կերպ՝ հանուն իշխանության նվաճման (կամ դրա պահպանման) սեպտեմբերյան պայքարից հետո փոխադարձ թշնամանքը շարունակելը, ինչը կարող է հանգեցնել նոր առճակատումների, նույնքան ծանր մեղք է:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ԵՎՐՈ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՆԻՇ

Նոր արժույթը ինչքանո՞վ կծառայի ընդհանուր շահերին

«Նյուզուիք» հանդեսի փետրվարի 3-ի համարը որպես բաբաթվա նյութ է ներկայացրել եվրոպական միասնական դրամի հարցը. նշելով, որ այն կարող է դառնալ «տասնամյակի պատմությունը»: Իրոք, եվրոյի կենսագործումով հավանաբար շատ բան կփոխվի Եվրոպայում. Բայց արդյո՞ք միայն Եվրոպայում. Իսկ ինչ ազդեցություն կունենա այդ ամենը կովկասյան պետությունների եւ մասնավորապես Հայաստանի տնտեսության վրա:

Եվրոպայում միասնական դրամանիշ մտցնելու հարցը տարածաշրջանի պատմության մեջ արծարծվել է դարեր շարունակ. բայց միշտ մնացել է անիրագործելի: Երբոր դարի հռոմեական կայսր Գայոս Դիոկղետիանոսը (284–305) փորձել է. բայց հաջողության չի հասել: Հինգ հարյուր տարի անց Պիպին Կարճահաս (Ֆրանկական պետության բազավոր եւ Կարոլինգների դինաստիայի հիմնադիր) եւ նրա որդի Կարլոս Մեծը (768–814) հաջողության հասել են. բայց շատ կարճ ժամանակով: Կոպենհագենից մինչեւ Ջոն Սայուարս Միլն ու լորդ Քեյնզ. եվրոպացի մտավորականները բազմիցս գրել են այդ մասի: Նույնիսկ երբեմնի Ազգերի լիգան է նմանատիպ բայլ կատարել:

Այժմ այդ գաղափարը դարձյալ օրակարգում է. եւ կարծես այս անգամ մտադրություններն ավելի լուրջ են:

Առաջինն այդ մասին ակնարկել է. ըստ «Նյուզուիք» հանդեսի փետրվարի 3-ի տվյալների. Ռիչարդ Նիքսոնը: 1971 թվի օգոստոսի 15-ին նա հայտարարեց. որ ամերիկյան դոլարն այսուհետեւ ինքնաբերաբար չի փոխարկվելու ոսկու: Այդ մի նախաձեռնությամբ նա բանեցնեցին ուժերի կողմից 1944-ին ստեղծված հետպատերազմյան դրամական կարգուկանոնը: Դրանով նա նվազեցրեց դոլարի դերը որպես պահեստային դրամանիշ եւ մի նոր ալիք բարձրացրեց. որտեղ դոլարն սկսեց տատանվել մարկի եւ իենի համեմատությամբ: Նա Եվրոպային համոզեց. որ Միացյալ Նահանգներն այլեւս դրամական շուկաների կայունությունն աշխարհում չի կարող պահպանել: Եվրոպական երկրները եկան եզրակացության. որ չհամախմբվելու դեպքում սպիտված կլինեն առանձին-առանձին ինքնասպան լինել: Բազելում (Շվեյցարիա) հանդիպելով 1972-ի զարնանը. Եվրահամայնքի այդ ժամանակվա անդամները որոշեցին իրենց արժույթների փոխանակման տատանումները պահել 2.25 տոկոսի սահմաններում: Բայց. երբ հաջորդ տարվա ընթացքում մարկի կտրուկ աճ արձանագրվեց. անդամների կեսը հրաժարվեց այդ որոշումից: Առաջարկվեց նոր «համատեղ տատանումների» տարբերակ. համաձայն որի փոխանակման կուրսերը պետք է վերանայվեն այն ժամանակ միայն. երբ շուկան բարձրացնի նման խորդի կրկնությունն էր մի փոքր բարեփոխված ձեւով: Այս անգամ տարադրամների արժեքները պետք է համեմատվեին այսպես կոչված էքյուի կամ ԵԱՄ-ի (եվրոպական արժութային միավոր) հետ. որը գոյություն ուներ միայն բանկերի կամ ֆինանսների նախարարությունների մայր մասյաններում:

ԵԴՀ-ն դեռեւս գործում է: Կողմնակիցների կարծիքով. նա կայունացրել է դրամական շուկան: Քննադատների կարծիքով. դրամի կուրսը մոտ 18 անգամ փոփոխության է ենթարկվել նույնքան տարիների ընթացքում: Դրանցից ամենաարմատականը տեղի է ունեցել 1992-ի սեպտեմբերին. երբ բրիտանական ֆունտը. իտալական լիրը. իսպանական պեսետը եւ պորտուգալական էսկուդոն ամբողջովին «խաղից դուրս» հայտարարվեցին:

Դրանից հետո ԵԴՀ-ի երկրները որոշեցին «ժամանակավորապես» բարձրացնել «թույլատրելի տատանումների» չափը մինչեւ 15 տոկոս: Քննադատներն անմիջապես արձանագրեցին. որ նման մեծ տարբերությունը ի չիք է դարձնում ամբողջ համակարգը. բայց ի զարմանս բոլորի. այդ համակարգը 1993-ից ի վեր հրաշալիորեն գործում է:

Միաժամանակ. աճում էր հարցին ավելի արմատական մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտությունը: 1980-ականների կեսերին եվրահանձնաժողովի նախագահ Ժակ Դելորը պետությունների ղեկավարներին համոզեց խոսքից գործի անցնելով ստեղծել ծառայությունների. մյուս բոլոր երկրները համաձայնվեցին միասնական արժույթ ընդունել 1997-ի կամ առավելագույնը 1999-ի ընթացքում:

Մաաստրիխտի պայմանագիրը մեծ ազդեցություն ունեցավ Եվրոպայի քաղաքական եւ տնտեսական կյանքի վրա: 1992-ից ի վեր կառավարությունները փորձում են բավարարել պայմանագրով նախատեսված բավական խիստ պահանջները ցածր արժեզրկում. բյուջեի փոքր դեֆիցիտ. նվազ պարտք եւ փոխանակման կուրսի կայունություն: Առայժմ 15 պետություններից միայն Լյուքսեմբուրգն է բավարարում բոլոր պահանջները: Հունաստանը ոչ մի պահանջ չի բավարարում: Ֆրանսիան եւ Գերմանիան դեռ պետք է նվազեցնեն իենց բյուջեի դեֆիցիտը: Այնպես որ տարեվերջին հազիվ յոթ կամ ութ երկրներ կարող են պատրաստ լինել ընտրվելու դրամական միության մեջ: Հնարավոր է. որ երրորդ. վերջին փուլը (դրամական շրջանառության կիրառումը) սկսվի 1999-ին:

Ֆրանսիան եւ Գերմանիան շատ են առաջ գնացել. եւ հետադարձ ճանապարհ չկա: Որոշ դիտորդների կարծիքով. եթե ԵԱՄ-ն նշված ժամկետում չկիրառվի. ապա երբեք էլ չի կիրառվի:

Այնպես որ պահանջները երեւի ենթարկվեն որոշ փոփոխությունների եւ մի շարք երկրներ միության մեջ ընդունվեն այն պայմանաբանությամբ. որ «ընթանում են ճիշտ ուղիով»: Բայց գլխավոր հարցն է. թե հարատեւելո՞ւ է արդյոք այդ համակարգը:

Պատմությունը ցույց է տվել. որ դրամական միաձուլումները յուրահատուկ դեպքերում են միայն հաջողության հասնում. մեծ տնտեսությունը փոքրի հետ միավորելու կամ աշխատուժի մեծ տեղաշարժերի միջոցով. ինչպես Բելգիա-Լյուքսեմբուրգի եւ Միացյալ Նահանգների դեպքում: ԵԱՄ-ն չի համապատասխանում ոչ մեկին. ոչ էլ մյուսին: Այն չի պատրաստվում վարձահատույց լինել բույլ տնտեսություն ունեցող երկրներին. այսպիսով կարող է որոշակի մի երկրի (ասենք Պորտուգալիային) հասցնել «մուրացկանի» կարգավիճակի: Կկարողանա՞ն արդյոք 15 եվրոպական երկրները դիմանալ մարտահրավերին:

«ՆՅՈՒԶՈՒԻՔ»



ՌՈՒՍԱՍՏԱՆ

Փորձում են Ելցինին համոզել, որ հիվանդ է

6 ՓԵՏՐՎԱՐ, RFI, DW: Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինն այս տարի առաջին անգամ հեռուստաելույթ ունեցավ: Նա պարսավեց թոշակների ազգային հիմնադրամի տնօրեն Բարչուկին, որն ավելի վաղ սպառնացել էր դադարեցնել թոշակների վճարումն այն անձանց, որոնք շարունակում են աշխատել: Ինչպես հայտարարեց Ելցինը, Բարչուկի հայտարարությունը չէր համաձայնեցվել ոչ նախագահի, ոչ կառավարության եւ ոչ էլ խորհրդարանի հետ: Բորիս Ելցինն այսօր Կրեմլում ընդունեց դաշնության խորհրդի նախագահ Եգոր Ստրոեւին: Ռուսաստանյան լրատվական գործակալությունների վկայությամբ, Ստրոեւն ու Ելցինը 1 ժամ քննարկել են մի շարք խնդիրներ, այդ թվում Չեչնիայի իրավիճակի հարցը: Իսկ Պետդումայի անվստահության հարցերով հանձնաժողովի ղեկավար Վիկտոր Իլյուխինը Դումայի խորհրդի այսօրվա նիստից հետո լրագրողներին հայտնեց, թե փետրվարի 12-ին Պետդուման նորից կքննարկի առողջական վիճակի պատճառով նախագահ Ելցինի իրավասությունների դադարեցման հարցը: Նա հայտնեց, որ այդ հարցի կապակցությամբ պատգամավորներից մինչեւ այժմ ստացվում են դիտողություններ եւ ուղղումներ, որոնցից մեկում, որն ըստ երեւույթին կընդունվի որպես վերջնական որոշում, ասվում է, որ Դուման նախագահի իրավասությունները չի համարում դադարեցված, ինչպես որ Իլյուխինի կողմից ներկայացված որոշման նախագծում է ասված, այլ խնդրում է պետության ղեկավարին անձամբ գնահատել իր առողջական վիճակն ու դադարեցնել իրավասությունները:

Լեբեդը «օրենքի մենաշնորհ» հաստատելու կոչ է անում

ՄՈՍԿՎԱ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ՈՈՅԹԵՐ: Ռուսաստանի Դաշնության անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Ալեքսանդր Լեբեդը հինգշաբթի տված հարցազրույցի ժամանակ հայտարարել է, թե իր նպատակն է «օրենքի մենաշնորհ» հաստատել երկրում, ընդսմին շեշտելով, որ ամբողջովին դեմ է խորհրդային օրերի վայրագություններին: Նա ընդունել է, որ զինվորական ասպարեզն օգտակար չի լինի իր քաղաքական կյանքի համար, եւ ավելացրել է, թե պիտի շարունակի խաղաղ միջոցներով նախագահական պաշտոնին հասնելու աշխատանքները: Ելցինի կառավարության մեջ իր կարճատեւ պաշտոնավարությանն անդրադառնալով, նա հայտնել է, թե նախարարներն այն տպավորությունն են թողնում, որ երկար ժամանակ իշխանությունը պահելու հույս չունեն եւ այդ պատճառով փորձում են ամենակարճ ժամանակամիջոցում առավելագույն շահեր ապահովել: Նա մեկ անգամ եւս շեշտել է, որ Ելցինի առողջական վիճակը լուրջ խոչընդոտ է, եւ հրաժարական տալու կոչ է արել նրան:

Գերմանիա եւ Ադրբեջան՝ մշակութային համագործակցություն

ԲԱԿՈՒ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ՓԱՍՏ: Փետրվարի 6-ին ստորագրվել է Ադրբեջանի եւ Գերմանիայի միջեւ մշակութային համագործակցության արձանագրություն: Ինչպես տեղեկացրեց ԳԴՀ ԱԳՆ մշակույթի վարչության ղեկավարի տեղակալ. դեսպան Խորսք Վինֆելմանը. հիշյալ փաստաթուղթը նախատեսում է երկու պետությունների միջեւ համագործակցություն մշակույթի. կրթության. արվեստի եւ սպորտի բնագավառներում: Գերմանացի դիվանագետը տեղեկացրեց նաեւ. որ մշակույթի հարցերով ադրբեջանա-գերմանական հանձնաժողովի հաջորդ նստաշրջանը կկայանա Գերմանիայում:

Ասադ. «Իսրայելն ունի կատարյալ անվտանգության իրավունք»

ԵՐՈՒՍԱՂԵՄ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ՆՏ: Ուրբաթ օրը «Հա Արեց» օրաթերթը հաղորդել է, որ Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադը ճանաչել է Իսրայելի «կատարյալ անվտանգության» իրավունքը, մի բայլ, որ կարող է էապես ավելացնել իսրայելա-սիրիական խաղաղ բանակցությունների վերսկսման հնարավորությունները: Լրագրի համաձայն, Սիրիայի նախագահը այդ հայտարարությունն արել է այս շաբաթվա սկզբին եվրամիության խաղաղության բանագնաց Միգուել Մորատինոսի հետ վարած բանակցությունների ընթացքում: Վերջինս Ասադի հետ հանդիպելուց հետո բանակցություններ է անցկացրել նաեւ Իսրայելում: Լրագիրը վկայակոչել է Ասադին, ասելով, թե «Իսրայելն ունի կատարյալ անվտանգության իրավունք եւ ես պատրաստ եմ ընդունել դա իբրեւ բանակցությունների սկզբունք»:

ՀԱՄԱՌՈՏ

Ուկրաինան Չեռնոբիլում նոր քարադամբան չի կառուցի

6 ՓԵՏՐՎԱՐ, RL: Ուկրաինան նոր քարադամբան չի կառուցի 86 թվականին պայթյունի հետեւանքով ավերված Չեռնոբիլի ատոմակայանի չորրորդ էներգաբլոկի համար: Այդ մասին այսօր հայտնեց Ուկրաինայի շրջակա միջավայրի պաշտպանության նախարար Կոստենկոն: Նրա խոսքերով, ծրագրված է միայն ամրացնել գոյություն ունեցող քարադամբանի պատերը, որոնք ճաքել են: Կոստենկոն հայտնեց, որ ուկրաինական առաջարկներն այդ կապակցությամբ կհայտնվեն Վաշինգտոնում տեղի ունենալիք 7 արդյունաբերական երկրների ներկայացուցիչների հանդիպման ժամանակ:

Դաղստան՝ չեչենների հարձակում ագարակի վրա

6 ՓԵՏՐՎԱՐ, DW, RL: Զինված չեչենների մի խումբ է երեկ հարձակվել Դաղստանում գտնվող ագարակի վրա: Ագարակատերը եւ օգնության հասած նրա ազգականները զինված հակահարված են տվել հարձակվողներին: Չորս չեչեններ, որոնցից մեկը կին էր եւ Իչկերիայի զինված ուժերի բժշկական ծառայության կապիտան՝ սպանվեցին: Սպանվածների թվում հակահետախուզության աշխատակից կար: Մյուս հարձակվողներին հաջողվեց թաքնվել: Հարձակման դրդապատճառները դեռեւս հայտնի չեն:

Ռուսաստանի թիվ 1 վարձու մարդասպանը՝ խեղդամահ

6 ՓԵՏՐՎԱՐ, RL: Հունաստանի իշխանությունները հաստատեցին անցած կիրակի օրը Աթենքի արվարձանում խեղդամահ արված ռուս կրկնահանցագործ Ալեքսանդր Սալոնիկի անձը: Այդ մասին այսօր ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությանը հայտնեց Ինտերպոլի Հունաստանի տեղական բյուրոյի ղեկավար Անկոս Պոսիոպուլոսը: Փորձաքննությունը հաստատեց, որ սպանվածի մատնահետքերը համընկնում են Սալոնիկի մատնահետքերին, որը ներկայացվել էր Ռուսաստանի ներքին գործերի նախարարության կողմից: Ռուսաստանում Սալոնիկը թիվ 1 վարձու մարդասպանն էր համարվում:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

1997-ը նույնպես հարուստ կլինի հանրագիտարաններով

Հարցազրույց Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագիր, պրոֆեսոր Կոնստանտին Խուդավերդյանի հետ

1996 թվականը Հայկական հանրագիտարանի խմբագրության համար բեղուն եղավ: Գլխավոր խմբագիր Կոնստանտին Խուդավերդյանի խոստովանությամբ, իր աշխատանքային պատմության մեջ առաջին անգամ հանրագիտարանի խմբագրությունը հնարավորություն ունեցավ հրատարակել երեք հանրագիտարան «Հայկական համառոտ հանրագիտարանի» երկրորդ հատորը, «Հայկական հարց-հանրագիտարանի» հայերեն տարբերակը, «Ոսկեփորիկ» մանկական հանրագիտարանի երկրորդ հատորը: Ասել է, թե 1996-ը, հանրագիտարանային տարի էր: Այս առումով ի՞նչ տպավորություններ ունի Հայկական հանրագիտարանի խմբագրությունը 1997-ից:

– Մտադիր ենք հրատարակել «Հայկական համառոտ հանրագիտարանի» երրորդ հատորը եւ «Տնային տնտեսություն» հանրագիտարանը, որը «Ընտանեկան հանրագիտարան» մատենաշարի երեք հատորներից առաջինն է: Երկրորդը կրում է «Հանրամատչելի բժշկական հանրագիտարան», իսկ երրորդը՝ «Հայաստանի բնաշխարհը» խորագրերը: Ցանկացողները կարող են ձեռք բերել եւ ենթադրեմ միասին, եւ յուրաքանչյուրն առանձին-առանձին:

Հետաքրքիր ենք եղել նաեւ «Ոսկեփորիկի» երրորդ հատորի դասդասմանը, որի հոդվածների մեծ մասն արդեն գրված է եւ շուտով կհանձնվի շարվածքի: Չեմ կարծում, թե այս տարի կարողանանք ավարտել, բայց 1998-ին վստահաբար այն ընթերցողի սեղանին կլինի:

– Արեւելքում եւ Հայաստանում շատերին է հետաքրքրում, թե ի՞նչ ընթացքի մեջ են սփյուռքի դպրությանը վերաբերող հանրագիտարանի աշխատանքները:

– Թվարկածս հրատարակություններին զուգահեռ, աշխատում ենք երկու այլ հանրագիտարանների վրա, դրանցից մեկը կոչվում է «Հայ սփյուռք» եւ նվիրված է սփյուռքի դպրությանն ու մեր կյանքին:

– Ի՞նչ ծավալ կունենա եւ հարցերի ինչպիսի՞ շրջանակ կներառի «Հայ սփյուռքը»:

– Այն իր տեսակի մեջ եզակի հանրագիտարան է, այդպիսի հրատարակություն չի եղել ոչ դրսում, ոչ էլ Հայաստանում: Ըստ իս, 1997-ին այս հանրագիտարանի աշխատանքներն ավարտված կլինեն, իսկ հաջորդ տարի արդեն լույս կտեսնի: Այստեղ շատ բան դպրմանավորված է ֆինանսական խնդիրներով: Եթե պետությունը դեսպանական դպրոցներ ձեռակերտի եւ, ինչպես խոստացել է, որոշ չափով օժանդակի, մեր գործը փոքր-ինչ կհեշտանա: Իսկ եթե գտնենք նաեւ հովանավորներ հենց սփյուռքում եւ այնտեղ հրատարակենք (որովհետեւ սպառողները հիմնականում գուցե հենց սփյուռքահայերը լինեն), մեր գործը շատ ավելի դյուրին կդառնա: Սա շատ հետաքրքիր հանրագիտարան է, բավականին մեծածավալ, մոտ 80 մամուլ: Ընդգրկում է շուրջ 70 երկրների համայնքների դպրությունը իր ողջ բազմազանությամբ: Փորձել ենք այնպես անել, որ սփյուռքի հետ առնչվող որեւէ էական հարց դուրս չմնա:

Նախ տրվում է համայնքի դպրությունը, այնուհետեւ գաղթօջախում հայերի գաղթումները, կենսակերպը, երկրի քաղաքական-հասարակական, տնտեսական եւ մշակութային կառույցներին հանդիպելիք դիմադրությունը, ինչպիսիք այսօր ունենք սփյուռքում (ամենօրյա, շաբաթօրյա, կիրակնօրյա), ի՞նչ ծրագրով են աշխատում նրանք, ո՞ր առարկաներն են հայերեն դասավանդվում, ի՞նչ թիվ են կազմում աշակերտները եւ ուսուցիչները, մի խոսքով, փորձել ենք կարելվույն մանրամասն տեղեկատվություն տալ սփյուռքահայ կրթօջախների մասին:

Մյուս բաժինը ներկայացնում է սփյուռքում գործող հասարակական-քաղաքական կազմակերպությունները եւ միությունները (կուսակցական, մշակութային, բարեգործական, հայրենակցական) եւ այն ընկերությունները, որոնք հատուկ են տակ առանձին համայնքներին (օրինակ, Ֆրանսիայում կան կազմակերպություններ, որ մնացած գաղթօջախներում չկան):

Առանձին խորագիր է հատկացված մշակույթին: Վերջինս ներկայացվում է եւ՝ այն հայերի շնորհիվ, որոնք նպաստում են հայկական մշակույթի զարգացմանը, եւ՝ մեր այն հայրենակիցների շնորհիվ, որոնք նպաստում են տվյալ երկրի մշակույթի զարգացմանը (Սարյան, Գառզու, Ժանսեմ եւ այլք):

Վերջին բաժինը մամուլն է, որ նույնպես բավականին մանրամասն ենք տալիս: Բանգի գրեթե բոլոր համայնքներում անցյալում եղել եւ այսօր էլ կա հայ մամուլ:

Իր տեսակի մեջ եզակի այս հանրագիտարանը, հուսով եմ, դրսում մեծ հետաքրքրություն կառաջացնի:

– Դուք հիշատակեցիք երկու հանրագիտարանների մասին...

– Այո, դեռեւս երեք տարի առաջ մենք սկսել ենք «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանի աշխատանքները: Վերնագիրն արդեն հուշում է, որ վերջինս նվիրված է մեր ժողովրդի մեծ դարձին, սակայն մենք մտադիր ենք այն հրատարակել 2001 թվից շուտ: Մեզանում ասվածաբանական լրամ եկեղեցուն նվիրված գրականություն շատ չի եղել հասկանալի դպրոցներով, ուստի ցանկանում ենք համակողմանիորեն ներկայացնել հայ եկեղեցու դերը մեր դպրության մեջ, Հայաստանի տեղը քրիստոնյա աշխարհում եւ հայ ժողովրդի ավանդը քրիստոնյա քաղաքակրթության զարգացման գործում: Այս երեք հիմնական հարցերի դպրասխանները տալով՝ կդպատկերացնենք, թե ինչ է նշանակում հայ քրիստոնյա: Այս հանրագիտարանի լույսընծայումը կարեւոր է նաեւ այն առումով, որ քրիստոնեությունը տոգորել է մեր մշակույթը, աշխարհայացքը, եւ շատ հարցեր, որ այսօր ծառացած են մեր հասարակությանը միասին, եւ յուրաքանչյուրն առանձին-առանձին:

Հետաքրքիր ենք եղել նաեւ «Ոսկեփորիկի» երրորդ հատորի դպրատասմանը, որի հոդվածների մեծ մասն արդեն գրված է եւ շուտով կհանձնվի շարվածքի: Չեմ կարծում, թե այս տարի կարողանանք ավարտել, բայց 1998-ին վստահաբար այն ընթերցողի սեղանին կլինի:

– Արեւելքում եւ Հայաստանում շատերին է հետաքրքրում, թե ի՞նչ ընթացքի մեջ են սփյուռքի դպրությանը վերաբերող հանրագիտարանի աշխատանքները:

– Թվարկածս հրատարակություններին զուգահեռ, աշխատում ենք երկու այլ հանրագիտարանների վրա, դրանցից մեկը կոչվում է «Հայ սփյուռք» եւ նվիրված է սփյուռքի դպրությանն ու մեր կյանքին:

– Ի՞նչ ծավալ կունենա եւ հարցերի ինչպիսի՞ շրջանակ կներառի «Հայ սփյուռքը»:

– Այն իր տեսակի մեջ եզակի հանրագիտարան է, այդպիսի հրատարակություն չի եղել ոչ դրսում, ոչ էլ Հայաստանում: Ըստ իս, 1997-ին այս հանրագիտարանի աշխատանքներն ավարտված կլինեն, իսկ հաջորդ տարի արդեն լույս կտեսնի: Այստեղ շատ բան դպրմանավորված է ֆինանսական խնդիրներով: Եթե պետությունը դեսպանական դպրոցներ ձեռակերտի եւ, ինչպես խոստացել է, որոշ չափով օժանդակի, մեր գործը փոքր-ինչ կհեշտանա: Իսկ եթե գտնենք նաեւ հովանավորներ հենց սփյուռքում եւ այնտեղ հրատարակենք (որովհետեւ սպառողները հիմնականում գուցե հենց սփյուռքահայերը լինեն), մեր գործը շատ ավելի դյուրին կդառնա: Սա շատ հետաքրքիր հանրագիտարան է, բավականին մեծածավալ, մոտ 80 մամուլ: Ընդգրկում է շուրջ 70 երկրների համայնքների դպրությունը իր ողջ բազմազանությամբ: Փորձել ենք այնպես անել, որ սփյուռքի հետ առնչվող որեւէ էական հարց դուրս չմնա:

Նախ տրվում է համայնքի դպրությունը, այնուհետեւ գաղթօջախում հայերի գաղթումները, կենսակերպը, երկրի քաղաքական-հասարակական, տնտեսական եւ մշակութային կառույցներին հանդիպելիք դիմադրությունը, ինչպիսիք այսօր ունենք սփյուռքում (ամենօրյա, շաբաթօրյա, կիրակնօրյա), ի՞նչ ծրագրով են աշխատում նրանք, ո՞ր առարկաներն են հայերեն դասավանդվում, ի՞նչ թիվ են կազմում աշակերտները եւ ուսուցիչները, մի խոսքով, փորձել ենք կարելվույն մանրամասն տեղեկատվություն տալ սփյուռքահայ կրթօջախների մասին:

Մյուս բաժինը ներկայացնում է սփյուռքում գործող հասարակական-քաղաքական կազմակերպությունները եւ միությունները (կուսակցական, մշակութային, բարեգործական, հայրենակցական) եւ այն ընկերությունները, որոնք հատուկ են տակ առանձին համայնքներին (օրինակ, Ֆրանսիայում կան կազմակերպություններ, որ մնացած գաղթօջախներում չկան):

Առանձին խորագիր է հատկացված մշակույթին: Վերջինս ներկայացվում է եւ՝ այն հայերի շնորհիվ, որոնք նպաստում են հայկական մշակույթի զարգացմանը, եւ՝ մեր այն հայրենակիցների շնորհիվ, որոնք նպաստում են տվյալ երկրի մշակույթի զարգացմանը (Սարյան, Գառզու, Ժանսեմ եւ այլք):

Վերջին բաժինը մամուլն է, որ նույնպես բավականին մանրամասն ենք տալիս: Բանգի գրեթե բոլոր համայնքներում անցյալում եղել եւ այսօր էլ կա հայ մամուլ:

Իր տեսակի մեջ եզակի այս հանրագիտարանը, հուսով եմ, դրսում մեծ հետաքրքրություն կառաջացնի:

– Դուք հիշատակեցիք երկու հանրագիտարանների մասին...

– Այո, դեռեւս երեք տարի առաջ մենք սկսել ենք «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանի աշխատանքները: Վերնագիրն արդեն հուշում է, որ վերջինս նվիրված է մեր ժողովրդի մեծ դարձին, սակայն մենք մտադիր ենք այն հրատարակել 2001 թվից շուտ: Մեզանում ասվածաբանական լրամ եկեղեցուն նվիրված գրականություն շատ չի եղել հասկանալի դպրոցներով, ուստի ցանկանում ենք համակողմանիորեն ներկայացնել հայ եկեղեցու դերը մեր դպրության մեջ, Հայաստանի տեղը քրիստոնյա աշխարհում եւ հայ ժողովրդի ավանդը քրիստոնյա քաղաքակրթության զարգացման գործում: Այս երեք հիմնական հարցերի դպրասխանները տալով՝ կդպատկերացնենք, թե ինչ է նշանակում հայ քրիստոնյա: Այս հանրագիտարանի լույսընծայումը կարեւոր է նաեւ այն առումով, որ քրիստոնեությունը տոգորել է մեր մշակույթը, աշխարհայացքը, եւ շատ հարցեր, որ այսօր ծառացած են մեր հասարա-

Չեշնիայի երեխաների բախտը չբերեց

ԵՐԵՎԱՆ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ՓԱՍՏ- Հոլիվուդի չխամրող աստղերից մեկի՝ անգուգական էլիզաբեթ Թեյլորի անսպասելի հիվանդությունը դպաշտա դարձավ, որ կինոասողը հրաժարվի այն հսկայական բարեգործական միջոցառումից, որը նա ձեռնարկել էր չեչենական դպատերազմում տուժած երեխաներին աջակցելու նպատակով: Միջոցառումից մի քանի օր առաջ բժիշկները դե ռասանուհու գլխում հայտնաբերեցին նոր ագոյացություններ եւ առաջարկեցին անհապաղ վիրահատել կինոասողին: Սակայն Թեյլորն իր համաձայնությունը տվեց միայն այն դայմանով, որ կվիրահատվի փետրվարի 17-ին այն բանից հետո, երբ սովորության համաձայն մեծ շուքով կնշի իր ծննդյան օրը՝ փետրվարի 16-ին:

OPT-ն ընդդեմ ասողերի

ԵՐԵՎԱՆ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ՓԱՍՏ- OPT հեռուստաընկերության ղեկավարության որոշմամբ, հիշյալ հեռուստաալիքով չեն ցուցադրվի ռուսական էստրադայի ժամանակակից մի քանի աստղերի որոշ «բաց» տեսահոլովակները: Ի դպատասխան որոշման նշված անձնանցից ոմանք ու նաեւ նիհիլիստները հայտարարել են, թե դայլը կարելի է բնորոշել գրգիչների քաղաքացիական իրավունքների խախտում: Սրանք հիշեցրել է OPT-ի այն տեսակետը, թե «ընկերությունն ստանց դաշ ու դատաստանի իրավատու է եւ ի վիճակի որոշելու, որ՝ հիշյալ հոլովակների ցուցադրումը կարող է ոչ միայն խանգարել, այլեւ վիրավորել հեռուստադիտողի ոչ միայն քաղաքացիական, այլեւ գեղագիտական իրավունքները: Իսկ ORT հեռուստաընկերությունը հեռուստադիտողի համար է»:

ՀԱՄԱՌՈՏ

Չարենցի հոբելյանը ԼՂՀ-ում՝ մեծ շուքով

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, ANIS-ԵՐԵՎԱՆ- Օրերս ԼՂՀ դեսական համալսարանի ռեկտորատում հաստատվեց մեծ բանաստեղծ եղիբե Չարենցի ծննդյան 100-ամյակի միջոցառումների ծրագիրը: Ստեղծվել է հոբելյանական հանձնաժողով, որի նախագահն է հաստատության ռեկտոր Պավել Եղիսկոդոսյանը: Մինչ բանաստեղծի ծննդյան օրը՝ մարտի 13-ը, եւ դրանից հետո մինչեւ հոկտեմբեր անցկացվելու են բազմաթիսի հավաքներ՝ գրական գեղարվեստական երեկոներ, հանդիդումներ:

Հրատարակության է դպատրաստվել Փարաջանովի նամականին

ԵՐԵՎԱՆ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ՓԱՍՏ- Ավելի քան երկու տարի է, ինչ Հայաստանի ազգային ֆիլմադարանի կողմից Փարաջանով բանգարանի աջակցությամբ հրատարակության է նախադպատրաստվել Սերգեյ Փարաջանովի նամականին: Նամակների այս ժողովածուում ընդգրկվել են ռեժիսորի մինչեւ օրս չտպագրված նամակները հարազատներին, ընկերներին, արվեստի հայտնի գործիչներին: Մասնավորապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում Փարաջանովի նամակները ախտրավայրից: Ազգային ֆիլմադարանը եւ Փարաջանով բանգարանը հովանավորներ են փնտրում այս արժեքավոր նամականին տպագրելու համար:

Մարսելում նշվեց «Բանբեր» -ի 70-ամյակը

ՄԱՐՍԵԼ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ- Այստեղ հանդիսությամբ նշվել է ֆրանսահայ ավետարանականների միության «Բանբեր» դպաշտոնաթերթի հիմնադրման 70-ամյակը: Հոբելյանական համարում շնորհավորանքի խոսքեր են հղել թերթի խմբագրական մարմնի նախագահ, ֆրանսահայ ավետարանական եկեղեցու միության նախագահ, գերդպատվելի Ժիլբեր Լեւոնյանը, Գերմանիայի հայոց առաջնորդ Գարեգին եդիսկոդոս Բեքչյանը: Թերթի անցած ուղու մասին ծավալուն հոդված է հրադարակել նրա գլխավոր խմբագիր Արի Թոփուզխանյանը: 3500 օրինակ տպաքանակով լույս տեսնող ամսաթերթը, որն սդառվում է աշխարհի 70 երկրներում, այդ թվում՝ մայր հայրենիքում եւ Արցախում, ժամանակի ընթացքում իր շուրջն է համախմբել նշանավոր շատ հայ մտավորականների:

Երեւանի մամուլի ակումբի նոր տեղեկագիրը

Լույս է տեսել Երեւանի մամուլի ակումբի տեղեկագրի այս տարվա առաջին համարը, ուր տեղ են գտել մամուլի այսօրվա ու վաղվա վիճակին նվիրված մի շարք հետաքրքիր նյութեր: Դրանց թվում են զանգվածային լրատվության միջոցների մի խումբ ղեկավարների կարծիքները ՀԱՄ-երի ընկերակցության նպատակների, ինչպես նաեւ նույն ընկերակցության առաջարկությունները զանգվածային լրատվության միջոցների գործունեությանն առնչվող օբյեկտների սեփականաշնորհման մասին: Տեղեկագրում տպագրվել է նաեւ «Շնորհների մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Յորի դքսուհի Սառա Ֆերգյուսոնը (աջից) եւ ավստրիացի շինարար-մագնատ Ռի-չարդ Լագների կինը Քրիստինը ավանդական օդերային դիմակահանդեսը դիտում էին միեւնույն օթյակից: Հանդիսությունում դքսուհին Լագների դպատվո հյուրն էր եւ, ըստ դպատվող լուրերի, Ֆերգյուսոնի ներկայության համար մագնատը վճարել էր 40000 դոլար: Դիմակահանդեսը տեղի է ունեցել փետրվարի 6-ին, Վիեննայում:

ԺԱՄԱՆԱԿԸ ՓՈՂ Է
ԽՆԱՅԵՔ ԱՅՆ
ՇՈՒՐՋՕՐՅԱ ՊԱՏՎԵՐՈՎ
ՏԱՔՍԻ՝
ՑԱՆԿԱՑԱԾ ՎԱՅՐԻՑ
ՑԱՆԿԱՑԱԾ ՎԱՅՐ
1 կմ - 120 դրամ
58-49-28, 58-50-28

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ԹԵՆԻՍ

Սամփրասը՝ միշտ բարձունքում

Ամերիկացի թենիսիստի վերջին մարտահրավերը

Աշխարհի թիվ 1 ռակետը «ջախջախում է» ամեն ինչ: Ռեկորդների վագրում Փիթը առաջադիմում է Բորգի ռեկորդների ֆոնի վրա եւ ունի վերջին հասնելու մեծ հնարավորություններ: Այժմ նրան մնում է միայն հաղթել «Ռոլան Գարոս»-ում, որը մարզիկի բարձրագույն երազանքն է:

ՌԱՅՏԱՐԱՆ-ԱՖՓ

Չորրորդ տարին անընդմեջ Փիթ Սամփրասը խաղաշրջանը ավարտեց համաշխարհային դասակարգման առաջին տեղում: Ավստրալիայի բաց առաջնությունում հաղթելուց հետո, կարելի է ասել, որ այս տարվա տասնմեկ ամիսներին նա դարձյալ կմնա բարձունքում: Եվ նրան հետաքրքրողներն, իրոք, իզուր են իրար անցնում:

Չանգը միշտ դայֆարի մեջ է մնում վերջին կախարդական խաղանից հետո: Իվանիշևիչին դակասում է մի փոքրիկ քայլ: Մուստերը մի փոքր ավելի դիմուկ է հողածածկ կորտերում: Կաֆելնիկովը կաշկանդանդվում է վճռական դահին: Իսկ ինչ վերաբերում է Աղասուն.... երկու տարի է, ինչ տղամարդկանց թենիսն «ադրում է» Լաս Վեգասի «ճաղատի» եւ Փիթ Սամփրասի մրցակցությամբ: Սակայն, շուտով նկատվեց, որ Անդրե Աղասին զուրկ է հենց նրանից, ինչը առանձնահատուկ է Սամփրասին, ասել է, թե կայունությունը բարձրագույն մակարդակի որակավորման մեջ:

Այնպես որ, Սամփրասն ինչ-որ ժամանակից սկսած մի գլուխ բարձր է մնացած բոլորից: Համաշխարհային վերջին դասակարգումը (տես ստորեւ) դրա վառ ապացույցն է: Աշխարհի թիվ 1 ռակետն այսուհետ ձեռք է բերել այնքան միավոր, որքան 1973-ից այս դասակարգման ստեղծումից ի վեր երբեւէ չի նվաճել եւ ոչ մի առաջատար թենիսիստ:

Ամենավճռորոշ ճնշությունը, որ առաջիկայում սպասում է ամերիկացուն, անկասկած, «Ռոլան Գարոսն» է՝ «Մեծ սաղավարտի», չորս մրցաշարերից միակը, որը բացակայում է Սամփրասի նվաճումների «գանձատուփից», եւ որը նա պիտի նվաճի, եթե, իհարկե ուզում է «խփել» ամբողջ «Սաղավարտի» ռեկորդը: Անցյալ տարի, մտնելով կիսաեզրափակիչ, նա անցավ բաղձալի բարձունքի... կողքով: Ո՞վ գիտի, գուցե հաջողվի՞ այս տարի...

Նրան բոլորից լավ ճանաչող մարզիչը՝ Պոլ Անակոնեն, այս առնչությամբ հավաստում է. «Փիթն, իրոք, վստահ է, որ կկարողանա հաղթանակել «Ռոլան Գարոսում», բայց չգիտեմ, թե անցյալում նա հավատո՞ւմ էր դրան»: Սամփրասի մարզիչն այս վստահ միտքը հայտնել է ընդամենը 4 ամիս առաջ:

Սամփրասի վերոհիշյալ ռեկորդը (5774 միավոր), որն արձանագրվել է հունվարի վերջում, ինչպես ասացինք, 1973-ից ի վեր չի «խփվել»: Միայն Անդրե Աղասուն 1995 թ. հաջողվեց մոտենալ այդ սահմանագծին՝ հավաքելով 5662 միավոր: Ավստրալիայի բաց առաջնության հաղթողը, դասակարգման մեջ իր հետաքրքրողից Գորան Իվանիշեւիչից առաջ է անցել ավելի քան 2000 միավորով: Իսկ երկու խաղացողներ՝ Աղասին ու Բեքերը, դուրս մնալով լավագույն տասնյակից, տեղեր զիջեցին Ռիոսի (7-րդ) եւ Մոյայի (9-րդ) համար:

Ստորեւ զետեղում ենք 20 լավագույն թենիսիստների համաշխարհային դասակարգման դասակարգը 1997 թ. հունվարի վերջի դրությամբ:

1.	(1) Սամփրաս	5774
2.	(4) Իվանիշեւիչ	3566
3.	(5) Մուստեր	3492
4.	(2) Չանգ	3417
5.	(3) Կաֆելնիկով	3367
6.	(7) Կրայչեկ	2371
7.	(11) Ռիոս	2329
8.	(10) Ֆերեյրա	2221
9.	(25) Մոյա	2171
10.	(9) Էնքվիստ	2088
11.	(13) Ա. Կոստա	2036
12.	(8) Աղասի	1948
13.	(6) Բեքեր	1931
14.	(12) Մարտին	1840
15.	(19) Մանտիլա	1688
16.	(14) Հենման	1587
17.	(15) Էդբերգ	1561
18.	(17) Գուստաֆսոն	1537
19.	(20) Շտիխ	1516
20.	(21) Բերասատեգի	1477

Պատրաստեց
ՍԵՐԳԵՅ ՄԿՐՏՉՅԱՆԸ

ԳԵՐՄԱՆԻԱ

Վահանյանի փայլուն խաղը. 9 հանդիպումներում 9 հաղթանակ

Գրոսմայստեր Ռաֆայել Վահանյանը շարունակում է հոյակապ հանդես գալ Գերմանիայի բունդեսլիգայի շախմատի թիմային առաջնությունում: Հերթական երկու տուրերում Քյոլնի «Փորց» ակումբի կազմում ելույթ ունեցող հայ շախմատիստը կրկին հաղթանակներ տարավ եւ այժմ պարզապես անհավատալի արդյունք ունի՝ 9 հնարավորից 9 միավոր:

Հետաքրքիր է, որ բունդեսլիգայի բոլոր տարիների բացարձակ լավագույն ցուցանիշը՝ 15 հնարավորից 13,5 միավոր, պատկանում է հենց իրեն՝ Վահանյանին: Այժմ Ռաֆայելը ձգտում է բարելավել իր իսկ ռեկորդը, եւ նրա արդյունքը ակնհայտորեն հավակնում է Գինեսի ռեկորդների գրքին:

Գ. Հ.

Հայ հեծանվորդն առայժմ երկրորդն է

Սպորտվարչության լրատվական ծառայությունից տեղեկացանք, որ Մոսկվայում անցկացվող հրապարակային հեծանվավազքի Ռուսաստանի բաց առաջնությունում ավարտվեց Օմսկում մրցաձեւի առաջին փուլը: Մրցումների վերջին օրը Գրիգոր Գրիգորյանը խմբակային վազքում գրավեց չորրորդ տեղը: Կրկին հաղթող ճանաչվեց ռուսաստանցի օլիմպիական չեմպիոն Ալեքսանդր Կիրիչենկոն, որն էլ, վաստակելով 64 միավոր, առաջին տեղն է զբաղեցնում ընդհանուր հաշվարկում: Առաջատարին երկու միավորով զիջում է երկրորդ տեղում ընթացող Գրիգորյանը: Լավագույն եռյակը եզրափակում է Վալերի Պոտապովը: Օմսկում մրցաձեւի երկրորդ փուլը կանցկացվի փետրվարի 10-13-ը, իսկ երրորդը՝ նույն ամսվա 17-21-ը:

ՇԱԽՄԱՏ

Չորսն ընթանում են առջեւից

Իսպանիայի Լինարես քաղաքում շարունակվում է 19-րդ կարգի շախմատի միջազգային ներկայացուցչական մրցաշարը: 3-րդ տուրում ռուսաստանցի Ալեքսեյ Դրեեւն առավելության հասավ ուկրաինացի Վասիլի Իվանչուկի նկատմամբ: Արհեստավարժ շախմատային ասոցիացիայի վարկածով աշխարհի չեմպիոն Գարրի Կասպարովը ոչ-ոքի ավարտեց պարտիան բելառուս գրոսմայստեր Բորիս Գելֆանդի դեմ: Նույն ելքն ունեցավ նաեւ ռուսաստանցի Վլադիմիր Կրամնիկի հանդիպումը բոսնիացի Պրեդրագ Նիկոլիչի հետ: Երեք հնարավորից վաստակելով 2-ական միավոր առաջատարությունը ստանձնել են անգլիացի Մայքլ Ադամսը, Գարրի Կասպարովը, Վլադիմիր Կրամնիկը եւ հունգարուհի Հուդիթ Պոլգարը:

ԳԼԴԱԿՈՎ ՀՈԿԵՅ

Մրցաշարում դեռ անորոշություն է

Գնդակով հոկեյի աշխարհի առաջնությունում, որն այս օրերին անցկացվում է Շվեդիայում, Ռուսաստանի հավաքականը խմբային մրցաշարի վերջին խաղում 7-5 հաշվով հաղթեց տանտերերի ընտրանուն եւ առաջին տեղը գրավեց նախնական «Ա» ենթախմբում: «Բ» խմբի եզրափակիչ խաղերում հունգարացիները 9-3 հաշվով առավելության հասան հոլանդացիների նկատմամբ, իսկ ամերիկացիները 5-2 հաշվով պարտության մատնեցին կանադացիներին: Այսպիսով Ռուսաստանի եւ Շվեդիայի հավաքականները դուրս եկան կիսաեզրափակիչ: Ռուսները կխաղան Նորվեգիա-Ղազախստան մրցամարտի հաղթողի հետ, իսկ շվեդների մրցակիցը կլինեն ԱՄՆ կամ Ֆինլանդիայի թիմերը:

ԹԵԹԵՎ ԱՍԼԵՏԻԿԱ

Կառլ թագավորը հեռանո՞ւմ է

Մեծն Կառլ Լյուիսը հայտարարել է, որ ամռանը ավարտելու է իր ելույթները:

Մոլորակի ամենաատիճանավոր թեթեւատլետը օլիմպիական 9 ոսկե մեդալների տիրակալը, որոշել է բողոքել սպորտը, հայտնում է ԱՊ գործակալության թղթակիցը:

«Շատերն ինձ կանգնեցնում են եւ ասում, որ ես պետք է շարունակեմ ելույթները, սակայն մտադիր եմ հեռանալ հունիսին Հյուստոնում», ասել է ամերիկացին:

35-ամյա մարզիկի նվաճումները յուրօրինակ են՝ բացի օլիմպիական «ոսկուց» նա 8 անգամ շահել է աշխարհի չեմպիոնի կոչումը, սահմանել աշխարհի 10 ռեկորդ: Նրան, երեւի կարելի է համեմատել միայն փառավոր Ջեսի Օուենի հետ, որի մարզական կենսագրությունը եւս նույնքան երկար եւ նույնքան վառ է եղել: Թեթեւ ատլետիկայի որոշ մասնագետներ, ինչպես օրինակ, ԱՄՆ հավաքականի մարզիչ Մել Ռոլենը, կարծում են, որ այնուամենայնիվ Լյուիսը բոլոր ժամանակների լավագույն մարզիկն է: Նրանք, ովքեր լավ են ճանաչում մարզիկին, պնդում են, որ չեմպիոնի որոշումը դժվար թե վերջնական լինի: Այդպիսի հայտարարություններ նա շատ է արել:

Լավատես հոր երազանքը

Անգլիացի Սթիվ Քելդիհոքը «Ուիլյամ Հիլլ» բուքմեքերային գրասենյակում 20 ֆունտ ստերլինգ գումար է դրել (մոտ 33 դոլար), որ իր որդին, որն այժմ 3 ամսական է, հանդես գալով Անգլիայի ազգային հավաքականում, գոլի հեղինակ կդառնա 2018 թվականի աշխարհի առաջնության եզրափակիչում:

Եթե Չելսի [illegible] 20[illegible] [illegible]կան կլինի 21 տարեկան, իրականացնի հոր երազանքը, ապա նրա հայրը կշահի 1 մլն ֆունտ ստերլինգ (մոտ 1,67 մլն դոլար):

«Ուիլյամ Հիլլ» ֆիրմայի ներկայացուցիչ Գրեմ Շարպը ասել է, որ շատերն են ցանկանում իրենց երեխաներին հայտնի ֆուտբոլիստ դարձնել, բայց այսպիսի լավատես հոր առաջին անգամ է հանդիպում:

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Վերահաստատվեց Բոսային չեմպիոնությունից զրկելու որոշումը

Նյուարկի (Նյու Ջերսիի նահանգ) բո-դոտարկման դատարանը հաստատել է նախկինում ընդունված դատավճիռը, համաձայն որի հարավաֆրիկացի Ֆրանսուա Բոսան զրկվել էր բոնցֆամարտի միջազգային ֆեդերացիայի (ԻԲՖ) վարկածով արհեստավարժների ծանր քաշում աշխարհի չեմպիոնի կոչումից:

Դատական նախնական որոշումը 1995 թվի դեկտեմբերի 9-ին Շտուտգարտում (Գերմանիա) Բոսայի եւ Ակսել Շուլցի միջեւ կայացած մենամարտի արդյունքը չեղյալ համարելու վերաբերյալ ընդունվել էր անցյալ տարվա մարտին: Փաստաթղթում նշվում էր, որ ԻԲՖ-ն սխալ է գործել, չորակազրկելով խթանիչներ օգտագործած հարավաֆրիկացուն, այլ միայն տուգանելով նրան 50 հազար դոլար եւ նոր մենամարտ նշանակելով 100 օր անց:

Հետաքրքիր է, որ 1996 թվին Բոսան ապարդյուն ջանքեր է գործադրել վերադարձնելու աշխարհում ուժեղագույնի կորցրած տիտղոսը: Սկզբում, հունիսին, Մայքլ Մուրերն էր փորձել վերադարձնել իրեն չեմպիոնի գոտին Շուլցի դեմ մենամարտում: Իսկ նոյեմբերին արդեն նրա դեմ ռինգ դուրս եկավ Բոսան: Սակայն, մրցամարտի 12-րդ ռաունդում մրցավարը գտավ, որ Բոսան տեխնիկական նոկաուտում է գտնվում:

Ծանոթացեք Օլլին, Սիդը եւ Միլլին

Օլիմպիադա-2000-ի կազմակերպիչները եկել են այն եզրակացության, որ կոալայի եւ կենգուրուի կերպարները բավականին «ծեծված են», որպեսզի դառնան ամառային օլիմպիական խաղերի խորհրդանիշեր: Դրանց փոխարեն որպես խորհրդանիշ ընտրվել են Ավստրալիայի կենդանական աշխարհի երեք այլ ներկայացուցիչներ՝ Սիդ մակնունով բադակտուցը, ելիզաբեթ Միլլին եւ «ծիծաղող» կուկաբառա թռչուն Օլլին:

«Կենգուրուն եւ կոալան աշխարհահռչակ են, նրանց պատկերները հաճախ են օգտագործվում, իսկ մենք կարող ենք ցույց տալ փոքր-ինչ նվազ ծանոթ, բայց ոչ պակաս ավստրալականը», ասել է նոր խորհրդանիշեր ստեղծող Մեյրու Հասսոնը: «Նրանք զվարճալի են, բարի եւ բացարձակ ավստրալական», խորհրդանիշերի մասին ասել է օլիմպիադան ընդունող Նոր Հարավային Ուելս նահանգի վարչապետ Բոբ Քարը: Նա ընդգծել է, որ նմանատիպ խորհրդանիշերը բոլորին կհիշեցնեն այն մասին, որ դրանք «էկոլոգիապես բարյացակամ խաղեր» են»:

«Սիդ» անունը առաջացել է օլիմպիադայի մայրաքաղաք Սիդնեյ անվանման կրճատումից, «Օլլին» ծագել է «Օլիմպիադա» բառից, իսկ «Միլլին»՝ նոր հազարամյակից:

Կազմակերպիչները վստահ են, որ սույն եռյակը չի կրկնի համակարգչի երեւակայությամբ ծնված եւ, ինչպես զգնում են, վերջին խաղերի բազմաթիվ հյուրերը եւ տանտերերը, իր բարձր նշանակությունը չարդարացրած, անորակի եւ անձեւ էակ. Ատլանտա-96-ի խորհրդանիշ Իզզիի ճակատագիրը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հեռքերով

TRT

Սուլեյման Դեմիրելն էլ սակարկեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հետ

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Խավիեր Սոլանան Անկարայում հանդիպումներն ավարտելուց հետո մեկնեց Թուրքիայից: Իսկ մինչ այդ Սոլանային ընդունեց նաև նախագահ Ս. Դեմիրելը: Ընդունելության ընթացքում Դեմիրելը նշեց, որ 1997 թվականը եվրոդրական բոլոր կազմակերպությունների վերակառուցման տեսակետից մեծ կարևորություն է ներկայացնում, ավելացնելով, «Եվրոդրայի աղտոտվածությունը համար ստեղծված ոսկե հնարավորությունը հարկավոր է ճիշտ օգտագործել: Եվ նոր Եվրոդրայի բոլոր կառույցներում Թուրքիան դեռ է ունենա իր արժանի տեղը: Հունիս ամսին Ամստերդամում կայանալիք Եվրամիության բարձր մակարդակի հանդիպման ժամանակ Թուրքիան չդիտեմ է դուրս մնա ընտանեկան լուսանկարից: Մենք ՆԱՏՕ-ի ընդլայնման կողմնակից ենք, բայց միևնույն ժամանակ խնդիրը դեռ է քննարկել Եվրոդրայի վերակառուցման շրջանակներում: Թուրքական հանրությունը ՆԱՏՕ-ի ընդլայնմանը դեմ կլինի այնքան ժամանակ, քանի դեռ Եվրամիության կազմում չի ունենա իր արժանի տեղը: Հակառակ դեպքում Թուրքիան ՆԱՏՕ-ին չի կարող աջակցել»:

Խավիեր Սոլանան իր հերթին հայտարարեց, որ «1997 թվականը ՆԱՏՕ-ի եւ Եվրոդրայի համար կարևորագույն տարի է, բայց այդուհանդերձ Եվրոդրայի վերակառուցման վերաբերյալ բոլոր խնդիրները այս տարի քննարկվել չեն կարող»:

Քաֆուն Մոսկվայից դահանջում է ձերբակալված Գուլիեւին

ԱԶՈՒ, 6 ՓԵՏՐՎԱՐ, ՓԱՍ, ANS-PRESS: Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախին դատգամավոր եւ Բաքվի նախկին ատենադպիր Մամեդ Գուլիեւը ձերբակալվել է հունվարի վերջին Մոսկվայում՝ մայրաքաղաքի ոստիկանության աշխատակիցների կողմից: 58-ամյա Մ. Գուլիեւը ձերբակալվել էր այն դահին, երբ գտնվում էր հիվանդ կնոջ՝ օրգանների դատվաստման «ինստիտուտում: Գուլիեւը այժմ գտնվում է Մատրոսկայա տիշինա» բանտում, եւ նրա մոտ չեն թողնում ոչ մերձավորներին, ոչ էլ փաստաբանին: Միեւնույն ժամանակ Ռուսաստանի գլխավոր դատախազությունում, որն արտոնել էր նրա ձերբակալությունը, հայտնեցին, որ Բաքվի նախկին դատախազը ձերբակալվել է ադրբեջանական իշխանությունների խնդրանքով՝ Ռուսաստանի եւ Ադրբեջանի միջեւ միջոցառական համաձայնագրերի հիման վրա: Ինչպես հնարավոր եղավ դարձել, Մ. Գուլիեւը մեղադրվում է Ադրբեջանի Քրեական օրենսգրքի 220 հոդվածով՝ հրազենի անօրինական ձեռքբերման, դահանման եւ կրելու համար: Չնայած հանրապետության իրավապահ մարմինները առայժմ որեւէ դաշտոնական հայտարարություն այդ կապակցությամբ չեն արել, ռուսաստանյան զանգվածային լրատվության միջոցների համաձայն, Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազությունն ուսումնասիրում է Ադրբեջանի կողմից ներկայացրած նյութերը՝ ձերբակալվածին հանձնելու դաշտոնական Բաքվին:

ՀԱՄԱՌՈՏ

Նավթատարը չի՞ անցնի Չեչնիայի տարածքով

ՄՈՍԿՎԱ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ՌՈՅԹԵՐ: Ռուսաստանյան «Սեգոդնյա» թերթը հաղորդել է, թե Ռուսաստանի իշխանությունները որոշել են չեղյալ հայտարարել ադրբեջանական նավթը Չեչնիայով անցնող նավթատարով դեպի սեւծովյան Նովոռոսիյսկ նավահանգիստ փոխադրելու համաձայնագիրը, որովհետեւ այդ կառակցությամբ համաձայնություն ձեռք բերել չի՝ հաջողվել: Երկու կողմերը որոշել էին փետրվար ու մարտ ամիսներին Չեչնիայով անցնող նավթատարով 70 մլն տոննա նավթ փոխադրել: Թերթը գրում է, որ այս որոշումը բացահայտում է Մոսկվայի այն համոզմունքը, թե Չեչնիայի անջատական իշխանություններին Ռուսաստանի դայմանները դարտադրելու համար կարելի է դիմանալ միջազգային վարկի ու տնտեսական մասնակի վնասներին: Մասնագետները հայտնում են, որ նավթը հավանաբար կառաքվի Վրաստանի ճանապարհով:

Քլինթոնի վարկանիշը բարձրանում է

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ՌՈՅԹԵՐ: Սի Բի Էս եւ Սի Էն Էն հեռուստակայանների, «Նյու Յորք թայմս» եւ «Յու Էս Էյ թուդեյ» օրաթերթի կողմից անցկացված հարցումների տվյալների համաձայն, ԱՄՆ-ի բնակչության 60-63 տոկոսը գոհ է նախագահ Բիլ Քլինթոնի վարած քաղաքականությունից, իսկ Կոնգրեսից գոհ է ժողովրդի միայն 36 տոկոսը:

«ԱՅԱՔՍ»
ՖԻՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՁԵԶ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ

Ամեն երկուշաբթի փուրիստական ուղեւորություն

ՀԱԼԵՊ-ԲԵՅՐՈՒԹ

հաճելի ճամփորդություն, շահավետ առեւտուր արեւելյան հարուստ շուկայում,
Երկու շաբաթը մեկ անգամ կանոնավոր ուղիղ չվերթ

ԵՐԵՎԱՆ-ԼԱՌՆԱԿԱ (ԿԻՊՐՈՍ)

ԲԱՐՁՐԱԿԱՐԳ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐ
ԲՈԼՈՐ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ,
ՀՐԱՇԱԼԻ ՍԻՑԵՐԿՐԱԿԱՆ ՕՈՎԱՓ,
ՀԱՅԵԼԻ ԺԱՄԱՆՑ
ԲՈԼՈՐ ՏԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆ, ՊՈՒՇԿԻՆԻ 43/ՀԵՌ. 538845, 531373

Լոտոհոլ

վիճակախաղի 06 խաղարկության արդյունքները ըստ տարբերակների

1	2	3	4	5
16	32	15	3	6

«ԼՈՏՈՀՈԼԸ» ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՁԵԶ
Լենինգրադյան 48, սդորտլոտոյի կրդակներ, Հեռ. 39-11-23, 39-14-81

«Լոտոհոլ» վիճակախաղի իրային շահումների աղյուսակ
05 փետրվարի 1997 թ. Երեւան

«Լոտոհոլի» 1-5 խաղարկություններին մասնակցած եւ չշահած տոմսերի համար

Տոմսի սերիա	Տոմսի համարը	Իրային շահման անվանումը	Գինը ԱՄՆ դոլարին համարժեք դրամով
001	022818	Փոշեծծիչ	145
001	034342	Միկրոալիքային վառարան	396
001	042940	Տեսախցիկ	880
001	045174	Փոշեծծիչ	145
001	069987	Երաժշտական կենտրոն	368
001	070701	Տեսամագնիտոֆոն	322
001	075792	Հեռուստացույց-62	1000
001	087957	Փոշեծծիչ	145
001	095909	Փոշեծծիչ	145
001	096581	Հեռուստացույց-50	347

Ծանոթություն. Հայտնում ենք «Լոտոհոլի» մասնակիցներին, որ սկսած 01 տիրաժից, խաղարկված եւ չշահած տոմսերը մասնակցում են պմենամսյա բոլոր իրային խաղարկություններին:

Հայաստանի ամերիկյան համալսարանի հասուկ դասընթացների բաժին

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար

Խավիեր Սոլանան

ներկայացնում է

«ՆԱՏՕ-ն հետսառըպատերազմյան շրջանում»

փետրվարի 12-ին
ժամը 19:00

Հայաստանի ամերիկյան համալսարան

Մեծ դահլիճ, 2-րդ հարկ

Մուտքն ազատ է

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 27-16-58

ՍՓՅՈՒՌ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲԱԶՄԱԼԵԶՈՒ ՏԵՂԵԿԱԳԻՐՔԸ «Եվրասիա» հիմնադրամի աջակցությամբ USAID-ի միջոցներով:
Ձեռնարկությունների մասին տեղեկությունները ներկայացված են անգլերեն եւ ռուսերեն լեզուներով, ապրանքների եւ ծառայությունների ցուցիչը անգլերեն, հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, իսպաներեն եւ արաբերեն լեզուներով:
Հրատարակիչ «ՍՓՅՈՒՌ» ՍՊԸ:

ՏԵՂԵԿԱԳԻՐՔԸ ԿԱՐԵԼԻ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԹԵՐԹԻ ԿՐՊԱԿՆԵՐԻՑ ԿԱՄ «ՍՓՅՈՒՌ» ՍՊԸ ԳՐԱՍԵՆՅԱԿԻՑ:

✉ Փավստոս Բուզանդի 1/3, 1-ին հարկ
☎ 58-13-51, 58-91-67

ՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՎ
բենզինի լցավորման կրդակ (3-րդ մասում):
Զանգահարել
52.16.87 Տիգրանին

ՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՎ
ավտոնակ Սեւաստոդոլյան փողոցում (Կիեւյանին զուգահեռ):
ՀԵՌ՝ 27-43-49

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
3 սենյականոց բնակարան, ավտոնակով, Վրացական փոդոցում:
ՀԵՌԱԽՈՍՆԵՐ՝
25-11-87, 58-18-41

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
2 սենյականոց բնակարան 5 հարկանի տարեւ. շենքի 1-ին հարկում, Դեմիրճյան 17 շենք:
Հեռախոսներ՝
58-18-41, 52-39-56

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
3 սենյականոց բնակարան, 9/3 հ-ում, Մարշալ 20/1 բն. 6, դուպրատան հարեւանությամբ:
ՀԵՌԱԽՈՍՆԵՐ՝
581353, 582725, 535701:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մդնումենն): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:
Զանգահարել՝ 21-22-57 ժամը 10-16, 58-33-26 ժամը 18-23:

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԻ ԵՎ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ ՀԵՌԱԽՈՍՈՎ՝ 589167, 581353

«Դարբերական» լրատվական գործակալության տարան. Երեւան-23, Արաքելոցաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 512. Տիրաժաքանակը 3000, Սդորագրված է տպագրության 7.02.1997. Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@